ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-Ն: ՀԱՍՑԵ՝ ք. ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32: ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գինը՝ 100 դրամ:

ՇԱԲԱԹ
7 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2013թ • № 23 (296)

www.syuniacyerkir.am

...Ո՞վ ենք մենք, վերջապես, նախիրցիներս: ...Եվ ո՞ւր ենք գնում:

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Նորակառույց կրթօջախը՝ հուսալի ապագայի երաշխիք

Գորիսի շրջանի Տեղ համայնքում գործարկվեց դպրոցի նորակառույց շենքը

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Տեղ գյուղը պատմամշակութային եւ հերոսական կենսագրություն ունի, հիմնադրվել է 10-րդ դարում Սյունյաց թագուհի Շահանդուխտի կողմից: 13-րդ դարում համարվում էր գյուղաքաղաք:

Գյուղն այսօր էլ Գորիսի շրջանի ամենամեծ համայնքն է՝ 2845 բնակչությամբ:

Բոլոր ժամանակներում էլ հայտնի է եղել իր քաջարի զորականներով, ստեղծագործ եւ շինարար մարդկանցով:

Արցախյան պատերազմի տարիներին ողջ գյուղը մեկ մարդու պես կանգնել էր թշնամու դեմ. այն դարձել էր հերոսության դարբնոց: Այսօր նրա ընտրյալները գեներալներ եւ գնդապետներ են, հայոց բանակաշինության ու ազգային բանակի նվիրյալներ:

Տեղ գյուղի N1 միջնակարգ դպրոցի նոր համալիրի շինարարական աշխատանքները սկսվել են 2009թ.: Մասնագիտական եզրակացության արդյունքում պարզվել էր, որ շենքը պիտանի չէ հետագա շահագործման, կառույցը գտնվել է վթարավտանգ վիճակում եւ՝ ենթակա կազմա-

Շարունակությունը՝ էջ 3

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ. «Զենքն ամուր ձեռքերում պիտի լինի»

2013թ. Գորիսի տարածաշրջանում անցկացված գարնանային զորակոչի, այն իրականացնելիս ծագած խնդիրների, բանակում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտի մասին է զրույցը Գորիսի զինկոմ, գնդապետ Մելիքսեթ Պողոսյանի հետ:

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿ

– Պարո՛ն գնդապետ, ինչպե՞ս եք գնահատում այս տարվա գարնանային զորակոչի արդյունքները:

– Գարնանային զորակոչն այս տարի, նախորդ տարիների համեմատ, մեկ ամիս ուշ ենք սկսել՝ պայմանավորված բուհական ընդունելության քննություններով: Վերջին հավաքը տեղի է ունեցել հուլիսի 29-ին: Ըստ պլան-առաջադրանքի՝ պիտի զորակոչեինք 150 հոգի, բայց զորակոչել ենք 162: 3 տարի է՝ Գորիսի զինկոմիսարիատը կարգերի մեջ առաջինն է, իսկ այս տարի՝ 2013թ., ճանաչվել է ՀՀ զինված ուժերի լավագույն զինկոմիսարիատ:

– Եթե թվային վերլուծություն անենք, ապա զորակոչվողների թվի մեջ կա՞ն էական տարբերություններ:

– Կար ժամանակ, որ ավելի շատ թվով երիտասարդներ էինք զորակոչում՝ կախված բնակչության թվաքանակից, բայց Գորիսում էական փոփոխություններ չկան այդ առումով, տարբերությունը զգալի չէ:

– Հիմնականում ո՞ր հիվանդություններն են գերակշռում զինակոչիկների շրջանում:

– Ցավալի է, բայց փաստ, որ գերակշռում են հատկապես սրտային հիվանդությունները, ողնաշարի դեֆորմացիան, գիշերամիզությունը, տեսողության խնդիրները: Պիտի նշեմ, որ բանակ զորակոչվողների նկատմամբ տարեցտարի պահանջները խստանում են, մանրակրկիտ ստուգում են անցնում, պատանի կա, որ մի քանի անգամ հետազոտում ենք, որպեսզի լիար-

Շարունակությունը՝ էջ 6

Համապեղ հայտարարություն

ՀՀ նախագահի ՌԴ կատարած այցի արդյունքների վերաբերյալ

Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ.Վ.Պուտինի հրավերով Հայաստանի Հանրապետության նախագահ Ս.Ա.Սարգսյանը 2013թ. սեպտեմբերի 3-ին աշխատանքային այց կատարեց Ռուսաստանի Դաշնություն:

Ս.Ա.Սարգսյանը եւ Վ.Վ.Պուտինը գոհունակությամբ նշեցին Հայաստանի եւ Ռուսաստանի փոխգործակցության դրական դինամիկան քաղաքական, առեւտրատնտեսական, մշակութային-հումանիտար, ռազմական ու ռազմաքաղաքական ոլորտներում եւ հաստատեցին հավատարմությունը 1997թ. օգոստոսի 29-ին Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ կնքված՝ Բարեկամության, համագործակցության եւ փոխադարձ օգնության մասին պայմանագրում եւ 2006թ. սեպտեմբերի 26-ին ստորագրված՝ 21-րդ դարին միտված Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ դաշնակցային փոխգործակցության մասին հռչակագրում ամրագրված սկզբունքներին:

Բանակցությունների ընթացքում պետությունների ղեկավարները համակողմանիորեն քննարկեցին երկկողմ դաշնակցային գործընկերության ներկա վիճակն ու հեռանկարները, արտաքին քաղաքական փոխգործակցության հարցերը:

Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության նախագահները հաստատեցին իրենց հավատարմությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծմանը բացառապես խաղաղ միջոցներով՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ համատեղ աշխատանքի ձեւաչափով, ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման, պետությունների տարածքային ամբողջականության, ժողովուրդների իրավահավասարություն եւ ինքնորոշման իրավունքի՝մեկ ամբողջություն կազմող սկզբունքների հիման վրա:

Տարածաշրջանային կայունության եւ անվտանգության ապահովման ուղղությամբ համատեղ աշխատանքի համատեքստում նշվեց կողմերի փոխադարձ պատրաստակամությունը ռազմաքաղաքական եւ ռազմատեխնիկական ոլորտներում համագործակցության հետագա ամրապնդման եւ փոխգործակցության կատարելագործման հարցում:

Երկու երկրների նախագահներն առանձին հայտարարությամբ հաստատեցին Հայաստանի եւ Ռուսաստանի վճռականությունը Եվրասիական տարածքում տնտեսական ինտեգրման գործընթացները զարգացնելու հարցում:

Արտահայտվեց երկու երկրների պատրաստակամությունը Հայաստանի տնտեսության արդիականացմանն ու դիվերսիֆիկացմանը եւ երկրի էներգետիկ անվտանգության ամրապնդմանն ուղղված երկկողմ ծրագրերի գործնական իրականացման հարցում:

Շարունակությունը՝ էջ 2

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ս ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՇԱԲԱԹ • 7 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 23 (296)

Համապեղ հայտարարություն

ՀՀ նախագահի ՌԴ կատարած այցի արդյունքների վերաբերյալ

Սկիզբը՝ էջ 1

Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահները նշեցին ներկայումս գործող Հայկական ԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգմանն ուղղված աշխատանքների, ինչպես նաեւ նոր ատոմային էլեկտրակայանի կառուցման նախագծի կարեւորությունը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց Ռուսաստանից Հայաստան էներգակիրների մատակարարման հարցում:

Հայաստանի եւ Ռուսաստանի ղեկավարներն ընդգծեցին ենթակառուցվածքային ծրագրերի, այդ թվում նաեւ երկաթուղային հաղորդակցության, ինչպես նաեւ նոր լոգիստիկ եւ հաղորդակցման ուղիների իրագործման ուղղությամբ համատեղ ջանքերը շարունակելու կարեւորությունը:

Շեշտադրվեց Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ մինչեւ 2020 թվականը երկարաժամկետ տնտեսական համագործակցության ծրագրի լիարժեք հետեւողական իրագործման կարեւորությունը, որի կապակցությամբ երկու երկրների ճյուղային գերատեսչություններին տրվել են համապատասխան հանձնարարականներ:

ՀՀ նախագահ
Ս. Սարգսյան
ՌԴ նախագահ
Վ. Պուտին

Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների համատեղ հայտարարություն

2013 թվականի սեպտեմբերի 3-ին Մոսկվայում տեղի ունեցած բանակցությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության նախագահ Ս.Ա.Սարգսյանը եւ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ.Վ.Պուտինը հաստատեցին Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության նպատակադրումը եվրասիական տարածքում տնտեսական ինտեգրման գործընթացների հետագա զարգացման ուղղությամբ:

Այդ համատեքստում Հայաստանի Հանրապետության նախագահ Ս.Ա.Սարգսյանը հայտարարեց Մաքսային միությանը միանալու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության որոշման եւ այդ նպատակով անհրաժեշտ կատարելիք քայլերը ձեռնարկելու մասին, իսկ հետագայում՝ եվրասիական տնտեսական միության ձեւավորմանը մասնակցելու վերաբերյալ:

Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ.Վ.Պուտինն իր աջակցությունը հայտնեց Հայաստանի Հանրապետության այդ որոշմանը եւ հայտնեց այդ գործընթացին համակողմանիորեն աջակցելու՝ Ռուսական կողմի պատրաստակամությունը:

ՀՀ նախագահ
Ս. Սարգսյան
ՌԴ նախագահ
Վ. Պուտին

Մոսկվա, 3 սեպտեմբերի 2013թ.

Սյունիքի մարզի դատախազը՝ միջազգային համաժողովում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

2013թ. հունիսի 20-24-ը Չինական Ժողովրդական Հանրապետության Ձինան քաղաքում տեղի է ունեցել հակակոռուպցիոն կառույցների միջազգային ասոցիացիայի 5-րդ համաժողովը՝ նվիրված ՄԱԿ-ի՝ կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 6-րդ գլխին՝ «Տեխնիկական օգնություն եւ տեղեկատվական փոխանակում» թեմային: Համաժողովին մասնակցում էր ՀՀ դատախազության պատվիրակությունը՝ գլխավորությամբ Սյունիքի մարզի դատախազ Նորայր Հակոբյանի, ով համաժողովում հանդես է եկել ելույթով: Նկատի ունենալով հանգամանքը, որ Սյունիքի մարզի դատախազն առաջին անգամ է մասնակցում միջազգային նման համաժողովի, նպատակահարմար գտանք զրուցել Նորայր Հակոբյանի հետ եւ համաժողովին ու քննարկված թեմային առնչվող մի քանի հարց ուղղել նրան:

– Պարո՛ն Հակոբյան, նախ կուզենայինք իմանալ, թե ինչ համաժողով (սեմինար) էր ՉԺՀ-ում հրավիրվել, երբվանի՞ց է սկիզբ առել այդ ավանդույթը, վերջինը (ըստ հերթականության) 5-րդն էր:

– 2013թ. հունիսի 22-24-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Ձինան քաղաքում հրավիրվել էր հակակոռուպցիոն կառույցների միջազգային ասոցիացիայի (IAACA) 5-րդ սեմինարը, որը նվիրված էր ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 6-րդ գլխով նախատեսված տեխնիկական օգնության եւ տեղեկատվության փոխանակման հիմնախնդիրներին:

Հակակոռուպցիոն կառույցների միջազգային ասոցիացիան ստեղծվել է 2006թ. հոկտեմբերի 22-ին, եւ նրա առաքելությունն է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի արդյունավետ կիրարկումը:

– Քանի՞ պետության պատվիրակություն էր մասնակցում համաժողովին, ովքե՞ր էին ՀՀ դատախազության պատվիրակության կազմում:

– Համաժողովին մասնակցում էին մոտ 300 պատվիրակ աշխարհի 76 պետությունից եւ մոտ մեկ տասնյակ միջազգային կազմակերպությունից: ՀՀ դատախազության պատվիրակության կազմում էինք՝ ես եւ ՀՀ գլխավոր դատախազության վարչության ու բաժնի երկու դատախազ:

– Դուք, որքանով տեղյակ ենք, նաեւ ելույթ եք ունեցել համաժողովում: Կուզենայինք իմանալ Ձեր ելույթի համառոտ բովանդակությունը:

– Սեմինարի մասնակից պետությունների ներկայացուցիչներին իրավունք էր վերապահված մինչեւ 15 րոպե տեւողությամբ ելույթ ներկայացնել քննարկման թեմա հանդիսացող կոնվենցիայի 6-րդ գլխով նախատեսված տեխնիկական օգնության եւ տեղեկատվության փոխանակման վերաբերյալ: Մի շարք պետությունների ներկայացուցիչներ հանդես եկան ելույթներով: Հայաստանի Հանրապետության դատախազության պատվիրակության անունից ելույթ ունեցա ես: Ելույթը նվիրված էր կոռուպցիոն արարքների կանխարգելման, բացահայտման եւ քննության ուղղությամբ ՀՀ դատախազության մարմինների գործունեության որոշ ասպեկտներին: Ներկայացվեց մեզանում կոռուպցիայի դեմ պայքար իրականացնող մարմինների գործունեության, կոռուպցիայի դեմ պայքարի ազգային ռազմավարության, ազգային մեխանիզմների, ինչպես նաեւ կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության կառուցակարգերի վերաբերյալ տեղեկատվություն: Ելույթում ներկայացվեց նաեւ կոնվենցիայի մասնակից պետությունների եւ միջազգային կազմակերպությունների միջեւ համագործակցության մասին մեր տեսակետը:

– Համաժողովը որեւէ եզրափակիչ (ամփոփիչ) փաստաթուղթ ընդունե՞ց, թե՞ ոչ: Միջազգային համաժողովների (ոչ միայն այս) ամփոփիչ փաստաթղթերն արդյո՞ք պարտադիր կիրարկման ենթակա են մեր հանրապետությունում, թե՞ իբրեւ խորհրդատվություն կամ երաշխավորություն են դիտվում:

– Համաժողովում ընդունված փաստաթղթերը կրում են խորհրդատվական բնույթ: Բացի այդ, որոշվեց հրապարակել մասնակիցների ելույթների ժողովածու, ընդհանրացնել արված առաջարկությունները՝ տրամադրելով մասնակիցներին:

– Ի՞նչ ուշագրավ դրվագների,

Շարունակությունը՝ էջ 5

լուրեր

Ըստ «Հայկական ժամանակ» օրաթերթի (31.08.2013թ.)՝ մի խումբ ազատամարտիկներ, օգոստոսի 30-ից, Վոլոդյա Ավետիսյանի գլխավորությամբ նստացույց են սկսել մարզկենտրոն Կապանում: Վոլոդյա Ավետիսյանի վկայությամբ՝ «Մենք մարզերով ենք շրջում, ու մեր նախաձեռնող խմբով որոշեցինք գալ էստեղ: Հիմա մոտ 20 հոգի է մասնակցում... Եկել ենք, որ էստեղ էլ ներկայացնենք ազատամարտիկների սոցիալական վիճակը, մարդկանց հասցնենք մեր գաղափարները, նպատակները»: Սեպտեմբերի 2-ին, սակայն, նստացույցը դադարել էր:

Օգոստոսի 29-30-ին առաջին անգամ մարզ էին այցելել հաշմանդամների աջակցության «Սատար» հասարակական եւ «Վերջին օրերի սրբեր» բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչները: Վերջիններս մարզի հատուկ կարիքավոր 31 քաղաքացու տրամադրեցին նոր, մասնագիտացված սայլակներ: Ըստ ոլորտի պատասխանատուների՝ մարզում հենաշարժական համակարգի խնդիրներ ունեցող հաշվառված 31 հաշմանդամները՝ 11-ը Կապանում, 15-ը՝ Գորիսում, 4-ը՝ Սիսիանում եւ 1-ը՝ Մեղրիում, բոլորն ապահովվեցին սայլակներով: «Սատար» հասարակական կազմակերպությունը սայլակներ ստանում է «Վերջին օրերի սրբեր» բարեգործական կազմակերպությունից: Ըստ բարեգործական կազմակերպության նախագահ Չարլի Ռեդլենի՝ իրենց հիմնական նպատակը հիվանդներին ճիշտ սայլակներ տրամադրելն է: Մարզի՝ հաշմանդամություն ունեցող անձինք, սայլակներից բացի ստացան նաեւ հոգեբանական աջակցություն:

Ըստ Սյունիքի մարզի դատախազության տարածած մամուլի հաղորդագրության՝ Սիսիանի քաղաքապետարանում հայտնաբերվել են չարաշահումներ՝ հողային օրենսդրության կիրառման, հողատարածքների օտարման գործընթացում: Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի եւ 314-րդ հոդվածի հատկանիշներով: Նախաքննությունն իրականացնում է ոստիկանության Սյունիքի մարզի քննչական բաժինը: Դատախազությունը ծանուցում է նաեւ՝ հանցագործության մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության կողմից հայտարարված «Տարվա երիտասարդական մայրաքաղաք 2014» մրցույթի արդյունքներն ամփոփվեցին սեպտեմբերի 3-ին: Տարվա երիտասարդական մայրաքաղաք է ճանաչվել Սիսիանը: 2014թ. երիտասարդական պետական քաղաքականության շրջանակում որոշակի միջոցառումներ կիրականացվեն Սիսիանում: Ըստ Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի՝ «Հաղթեց Սիսիանը, բայց ընդհանուր առմամբ հաղթեց Հայաստանի Հանրապետության ողջ երիտասարդությունը»: Իսկ փոխնախարար Արսեն Քարամյանը փաստեց՝ «Սա գործընթացի սկիզբն է: Մարզերում բնակվում են շատ երիտասարդներ, ովքեր այսօր ունեն մեր հոգածության, ուշադրության կարիքը, եւ սա ուշադրության գրավականներից մեկն է»: Մրցույթի ընթացքի եւ արդյունքների մասին առավել հանգամանալից՝ «Սյունյաց երկրի» հաջորդ համարում:

ÎðÂàôÂÚàôÜ

Նորակառույց կրթօջախը՝ հուսալի ապագայի երաշխիք

Գորիսի շրջանի Տեղ համայնքում գործարկվեց դպրոցի նորակառույց շենքը

Սկիզբը՝ էջ 1

քանդման, ուստի անհրաժեշտություն է առաջացել նոր շենքի կառուցման:

Նոր շենքի ընդհանուր մակերեսն ավելի քան 2200 քմ է, դպրոցը նախատեսված է 250 աշակերտի համար:

Դպրոցի կառուցապատողն «Առվա երկիր» ՍՊԸ-ն է: Շենքի շինարարությունը մեկնարկել է թվով չորս մասնաշենքի հողային աշխատանքներով, հիմքերի, պատերի, ծածկերի, միջնորմների, տանիքի կառուցմամբ:

Շենքը շահագործման է հանձնվել մետաղապլաստե պատուհանների եւ դռների տեղադրմամբ, ներքին եւ արտաքին հարդարման աշխատանքներով, էլեկտրական մատակարարմամբ, ջրամատակարարման, ջեռուցման եւ կոյուղու համակարգերով, գազամատակարարմամբ: Ամբողջությամբ բարեկարգվել է դպրոցի տարածքը: Դպրոցն ապահովվել է աշակերտական եւ ուսուցչական գույքով:

2009-2013թթ. դպրոցի կառուցման վրա ծախսվել է 480 մլն դրամ:

Նոր ուսումնական տարվա շեմին՝ օգոստոսի 31-ին, Գորիսի շրջանի Տեղ գյուղում բացվեց N1 միջնակարգ դպրոցի նորակառույց շենքը, որն իր տեսակի մեջ բացառիկ է:

Միաժամանակ նշվում էր երեք տոն՝ դպրոցի հիմնադրման 140-ամյակը, Գիտելիքի օրը եւ դպրոցական նորակառույց հոյակերտ շենքի բացումը:

Արարողությանը մասնակցում էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը, քաղաքաշինության, սփյուռքի, գյուղատնտեսության նախարարները, հանրապետության եւ մարզի այլ պաշտոնյաներ:

Տեղ գյուղում 1873 թվականին է բացվել առաջին դպրոցը՝ 21 աշակերտով, որտեղ դասավանդել են հայոց կրոն, տառաճանաչություն եւ ընթերցանություն, վայելչագրություն, եկեղեցական երգեցողություն եւ թվագրություն:

Անապահով կյանքի, դժվարությունների հաղթահարման, բայց եւ ապագայի հանդեպ լուսավոր հույսի պայմաններում հիմնադրվեց գյուղի առաջին դպրոցը՝ տների կավաշեն սենյակներում:

1893թ. «Ղաշար» թաղամասում կառուցված դպրոցական շենքում սովորում էին Տեղ, հարեւան Կոռնիձոր, Քարաշեն եւ Արավուս գյուղերի երեխաները՝ թվով 50-100 հոգի:

Աշակերտների ամենամեծ թիվը, որ գրանցվել է, 1963 թվականին էր. այն կազմել է շուրջ 700 սովորող:

Դպրոցը 1966թ. անվանակոչվել է նախկին ԽՍՀՄ հերոս Արամայիս Սարգսյանի անունով:

1977թ. գյուղում բացվել է 2-րդ միջնակարգ դպրոցը:

140-ամյա դպրոցն անցել է դժվարին, բայց փառավոր ուղի:

Տեղ գյուղում 1960թ. կառուցված N1 դպրոցն առաջին անգամ լրջորեն ավերվել է Արցախյան պատերազմի ժամանակ՝ թշնամու հրետակոծություններից, որի ժամանակ հրաշքով եւ բարեբախտաբար, ուսուցիչների խիզախ կողմնորոշմամբ, զոհեր չեն եղել: Այնուհետ, արդեն իսկ վթարված դպրոցը վերջնական փլվել է 2011թ. հունիսի 9-ին, որտեղ աշակերտները 10 րոպե առաջ մաթեմատիկայից քննություն էին հանձնել եւ դուրս եկել դպրոցից:

Փլուզումից հետո աշակերտների մի մասը հիվանդանոցի հին մասնաշենքում էր դասերն անցկացնում, մյուս մասը՝ Տեղ գյուղի N2 դպրոցի դասասենյակներում:

Այս տարի սեպտեմբերի 1-ին դպրոց կհաճախի 237 աշակերտ, որից 20-ը՝ առաջին դասարան: Նոր ուսումնական տարում 2 հոգով ավելացել է առաջին դասարանցիների թիվը, որոնց անվճար պայուսակներ են տրամադրել գյուղնախարարության աշխատակիցները: Անցած տարի դպրոցը 24 շրջանավարտ ուներ, որից ինը հոգի արդեն բուհական է:

Դպրոցն իր ողջ պատմության ընթացքում նշանավոր շրջանավարտներ է տվել. 52-ից ավելի գիտությունների թեկնածու եւ դոկտոր, հանրաճանաչ մարդիկ արվեստի բնագավառում, երկրի տնտեսության, արդյունաբերության, կրթության եւ մշակույթի ոլորտներում:

Գյուղի 140-ամյա N1 միջնակարգ դպրոցի ջահակիրները եղել եւ մնում են նրա հոգեւոր սերմնացանները՝ մանկավարժները, որ տասնամյակների ընթացքում, անգամ պատերազմական թեժ օրերին, մղվող մարտերի ու կռիվների ժամանակ, խավար, կիսաքաղց եւ դաժան պայմաններում միշտ վառ են պահել կրթօջախի կրակը, մատաղ սերնդի կրթության եւ դաստիարակության գործին նվիրվել անձնուրաց եւ անմնացորդ:

Վաստակավոր մանկավարժների թիվն անցնում է երեք տասնյակից: Նրանց բարի ավանդույթներն էլ հենց այն ուղեցույց ջահն է, որով այսօր առաջնորդվում են դպրոցի մանկավարժական լուսավոր բույլը համալրած երիտասարդ մանկավարժները:

Նորակառույց դպրոցի եռատոնի բացման խոսքով հանդես եկավ դպրոցի տնօրեն Սլավիկ Գրիգորյանը: Նա մասնավորապես ասաց. **«Ցանկանում եմ երախտիքի խոսք հղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին, ում ազգանպաստ նախաձեռնությամբ փլատակներից փյունիկի պես հառնեց դպրոցական այս նորակառույցը՝ ժամանակակից բոլոր հարմարություններով, սեյսմակայունությամբ: Վերջին հաշվով, փլուզված դպրոցի շենքի տեղում նոր կրթօջախ կառուցելն արտահայտում է պատմական եւ հերոսական համայնքի ապագայի հանդեպ բոլոր նրանց լավատեսությունն ու լուսավոր հավատը, ովքեր նախաձեռնել եւ ընդգրկված են եղել այս պայծառ գործում: Այսօրվա այս հոյակերտ կրթօջախը երաշխիքն է մեր երկրի հուսալի ապագայի ու Հայաստան աշխարհի հարատեւման, մեր բոլորիս հույսերի ու իրականացվող երազանքների... Վստահ եմ, որ հիացմունք, մաքրություն եւ կոկիկություն ներշնչող մեր նորակառույցն ուսումնական եւ ստեղծագործական նոր լիցքեր կհաղորդի բոլորիս, կհանդիսանա այն հոգեւոր լավագույնի աղբյուրը, որ իմացության լույս է կոչվում...»:**

Դպրոցական եւ ուսուցչական կազմին շնորհավորանքի եւ ՀՀ կառավարությանն ու մարզային իշխանություններին՝ շնորհակալության խոսք ասաց Տեղի գյուղապետ Սաղաթել Գալստյանը:

Հնչեցին նաեւ աշակերտների շնորհակալական ջերմ խոսքեր:

Տոնական արարողության վերջում նորակառույց դպրոցի բացման առթիվ շնորհավորանքի եւ կրթական ոլորտում հետագա ձեռքբերումների բարեմաղթանքի խոսք ասաց ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Բացման հանդիսավոր արարողությունից հետո առաջին դասարանցիները կտրեցին նորակառույցի կարմիր ժապավենը, եւ, միանգամից, ծափողջույնների եւ ուրախ երաժշտության ներքո, երկինք ելան ու խաղաղությամբ թեւածեցին աղավնիները, որոնց ճախրանքն ասես լույսի ու հավատի, խաղաղության պատգամն էր...

...Մեկ ժամ եւ ավելի ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, քաղաքաշինության, սփյուռքի եւ գյուղատնտեսության նախարարների, Սյունիքի մարզպետի, կառավարության եւ տեղական ինքնակառավարման մարմինների այլ պաշտոնյաների ուղեկցությամբ շրջում էր ուսումնական հաստատությունում, ծանոթանում կատարված աշխատանքներին, ստեղծված ուսումնական պայմաններին:

Տեղ համայնքի նորակառույց դպրոցը ոչ միայն կրթական, նաեւ ռազմավարական նշանակության հզոր երեւույթ է, որի օրինակը լեռնային բնակավայրերում պետք է միակը եւ եզակին չլինի...

ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՇԱԲԱԹ • 7 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 23 (296)

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ. «Ես ամեն ինչ կանեմ, որ Սյունիքում նոր հանքավայրեր բացվեն»

Հարցազրույց Սյունիքի թիվ 38 ընտրատարածքում առաջադրված ՀՀԿ-ական պատգամավորի թեկնածու, Կապանի նախկին քաղաքապետ Արմեն Կարապետյանի հետ:

Մ.Յ ՔԵՋ ԲԱՆ

– Պարո՛ն Կարապետյան, ի՞նչ եք կարծում, իշխանությունն ինչո՞ւ կանգ առավ հենց Ձեր թեկնածության վրա:

– ՀՀԿ-ի կենտրոնական, տեղական եւ մարզային խորհուրդներում բավական քննարկումներ են եղել եւ վերջնական կանգ են առել իմ թեկնածության վրա:

– Նախկին մարզպետ Սուրեն Խաչատրյանի կարծիքը, Ձեր առաջադրման հետ կապված, Ձեզ հայտնի՞ է:

– Փաստորեն, ոչ միայն Սուրեն Խաչատրյանի, ով մարզային խորհրդի նախագահն է, կարելի է ասել՝ բոլորի կարծիքն էլ միեւնույնն է եղել: Ոչ մեկ դեմ չի եղել, որ ես առաջադրվեմ: Դա անձնավորված որոշում չի եղել: Կուսակցական որոշում է եղել, եւ այդ հարցը շատ երկար է քննարկվել:

– Խոսակցություններ կան, որ ժամանակին Ձեր եւ Սուրեն Խաչատրյանի միջեւ հակասություններ են եղել, այդ պատճառով էլ Ձեր թեկնածությունը նրա սրտով չի եղել:

– Չէի ասի, թե հակասություններ են եղել. դրանք ուղղակի, աշխատանքի հետ կապված, եղել են տարբեր մեկնաբանություններ ու կարծիքներ, անձնական չի եղել, աշխատանքային է եղել:

Հատկապես վերջին մեկուկես տարվա ընթացքում շատ համագործակցված աշխատել ենք, որեւէ անգամ չեմ լսել որեւէ հակասության մասին, բոլոր խնդիրները լուծվել են՝ մարզի շահերից ելնելով: Նախկին մարզպետը դեմ չի եղել իմ թեկնածությանը, բոլորն էլ կողմ են եղել:

– Փաստորեն, Ձեզ ՀՀԿ թեկնածու դառնալու հարցում աջակցել է նաեւ նախկին մարզպետը, իսկ Դուք, եթե դառնաք պատգամավոր, ի՞նչ եք անելու Սուրեն Խաչատրյանին աջակցելու համար, որպեսզի այդ մարդը նույնպես իր տաղանդը դրսեւորելու հնարավորություն ունենա:

– Աժ պատգամավորը մարդու տաղանդը չի պաշտպանում, մենք մարդու տաղանդը պաշտպանելու խնդիր չունենք: Աժ պատգամավորը պաշտպանում է ժողովրդին, իր ընտրողին: Սուրեն Խաչատրյանը նույնպես ժողովրդի մի մասն է:

Դե, ինչ ասեմ, երեք թեկնածու կա, թող ժողովուրդը որոշի՝ ում է ընտրելու:

– Վերջին անգամ Կապանում Դուք՝ որպես քաղաքապետի թեկնածու, պարտվել եք ՀՅԴ-ական Արթուր Աբայանին: Եթե այն ժամանակ կապանցիները Ձեզ չվստահեցին, ինչո՞ւ եք կարծում, որ հիմա են վստահելու:

– Ընտրության ժամանակ, երբ քաղաքական պայքարի մեջ ես մտնում, պարտադիր չէ, որ հաղթես, միշտ ինչ-որ մեկը պարտվում է: Ես 2 անգամ հաղթել եմ, մեկ անգամ՝ պարտվել, ընդ որում՝ ձայների շատ չնչին տարբերությամբ: Ժողովուրդն այդ պահին ընտրել է Արթուր Աբայանին, ես էլ ընդունել եմ այդ ընտրությունը:

– Վերջերս Կապանի քաղաքապետի ընտրությանն ինչո՞ւ չմասնակցեցիք:

– Ես կարծում եմ, որ մարդը 2 անգամից ավելի համայնքի ղեկավար չպիտի աշխատի:

– Իսկ Աժ պատգամավոր քանի՞ անգամ կարելի է առաջադրվել եւ ընտրվել:

– Պատգամավորի դեպքում տարիների սահմանափակումը ճիշտ չէ, քանի ժողովուրդն ընտրում է, կարելի է առաջադրվել:

– Եթե ընտրվեք, որո՞նք են հիմնական խնդիրները, որ պիտի լուծեք:

– Ճիշտ է, ես եղել եմ Կապանի քաղաքապետ, բայց համայնքային խնդիրներն ամեն տեղ նույնն են՝ ե՛ւ Մեղրիում, ե՛ւ Ագարակում, ե՛ւ Կապանում: Խնդիրներ շատ կան՝ բնակֆոնդ, քաղաքաշինություն, կրթություն, հանքային արդյունաբերություն: Ես գտնում եմ, որ Աժ-ում հանքային արդյունաբերության վրա պետք է մեծ ուշադրություն դարձնել: Հանքարդյունաբերությունը պետք է ազատ, անկախ աշխատի, որպեսզի արտասահմանյան ներդրողները շատանան, իսկ մեր տարածաշրջանը շատ հարուստ է հանքավայրերով: Ես անպայման ուշադրություն կդարձնեմ եւ ամեն ինչ կանեմ, որ նոր հանքավայրեր բացվեն, նոր աշխատատեղեր ստեղծվեն: Մեր տարածաշրջանում, հատկապես Կապանում, գործազրկության դեմը կարելի է առնել՝ միայն նոր հանքավայրեր բացելով:

– Այսօր Հայաստանում շարժում է սկսվել ընդդեմ հանքերի շահագործման, քանի որ հանքերի շահագործումը բնապահպանական վնաս է հասցնում շրջակա միջավայրին: Փաստորեն, Դուք պետք է դե՞մ գնաք բնապահպանական շարժումներին ու ակտիվիստներին:

– Ես չեմ կարծում, որ ակտիվիստները պայքարում են հանքարդյունաբերության դեմ: Մարդիկ, Երեւանում նստած, չգիտեն մեր տարածաշրջանի կարիքներն ու խնդիրները: Հանքարդյունաբերությունը ոչ մի վնաս չի տալիս մեր ժողովրդին, հակառակը՝ օգուտ է տալիս:

– Իսկ բնությա՞նը. բնապահպան ակտիվիստներն ասում են, որ հանքարդյունաբերությունը ոչնչացնում է բնությունը:

– Ո՛չ, բնությանը նույնպես ոչ մի վնաս չի տալիս: Մենք այսքան տարի հանքերը շահագործում ենք. խնդրեմ, նայեք տեսեք, թե ինչպի՛սի կանաչ բնություն ունենք, մարդիկ էլ առողջ են, էնպես որ ոչ մի վնաս հանքարդյունաբերությունը չի տվել: Ընդհակառակը. օգտակար է գործազրկության նվազեցման, սոցիալական խնդիրների համար: Իհարկե, բնապահպանությունն էլ է կարեւոր, պետք է այնպես անել, որ մարդու վնաս չտանք, բայց չի նշանակում, թե այդ հարցը պետք է շահարկվի ու հանքարդյունաբերությունը կանգնեցվի:

– Իսկ արտագաղթի դեմն ինչպե՞ս եք առնելու. ժողովուրդը հեռանում է իշխանության պատճառով, որի անդամն եք նաեւ Դուք:

– Չի կարելի է ասել, որ իշխանությունների պատճառով են գնում կամ ՀՀԿ-ի պատճառով են գնում: ՀՀԿ-ն արտագաղթի հետ կապ չունի, ամբողջ աշխարհում էլ իշխանությանը նման հարցերում մեղադրում են, բայց իշխանությունն ի՞նչ կապ ունի: Սահմանները բացվել են, մարդկանց գաղափարները փոխվել են, 70 տարվա կաղապարված վիճակից դուրս են եկել, մարդիկ տեսնում են՝ որտեղ իրենց աշխատանքն ավելի բարձր է գնահատվում, գնում են այնտեղ: Բայց սա միայն Հայաստանում չէ, ամբողջ աշխարհում է, բոլոր երկրներից էլ գնում են: Հնարավոր է, որ Հայաստանից մի քիչ ավելի շատ են գնում, բայց արտագաղթ ամեն տեղ էլ կա: Դուք ասում եք՝ իշխանությունն է մեղավոր, ես էլ ասում եմ՝ ամեն ժողովուրդ արժանի է իր ղեկավարությանը. հասարակությունն է ընտրում այս իշխանությանը, ուրեմն դա է իր ընտրածը, իր պահանջը:

– Ո՞ւմ եք համարում Ձեր հիմնական մրցակիցը:

– Բոլորին էլ համարում եմ:

– Ձեր մրցակիցներից մեկը՝ «Ժառանգության» ներկայացուցիչը, հայտարարել է, որ եթե Դուք կեղծիքով հաղթեք, ինքն ու իր կողմնակիցները կփակեն Կապան-Երեւան ճանապարհը:

– Չէ, չէ՛, վերջին ընտրություններին նման երեւույթները համարյա թե վերացել են: Մեր մարզում այդպիսի բան գոյություն չունի, ինչո՞ւ պիտի կեղծարարություն անենք: Ժողովուրդն է որոշում՝ ում ընտրի:

Հարցազրույցը՝ Կարինե Սարիբեկյանի
hayeli.am
«Սյունյաց երկրի» կողմից

Մենք չենք ուզում մեկնաբանել պատգամավորի թեկնածուի դիրքորոշումը, բայց եւ ցավ ենք ապրում, որ Կապանի եւ Մեղրու շրջանները ներկայացնելու հավակնություն ունեցող անձնավորությունն այսպես է մտածում: Թերեւս այդպես կարող էր մտածել այն մարդը, ում երեխաներն այստեղ չեն ապրում եւ այստեղ չեն ապրելու: Մնում է սպասել, որ Կապանի եւ Մեղրու շրջանների ընտրողները մեկ մարդու պես սեպտեմբերի 29-ին կքվեարկեն պատգամավորի սույն թեկնածուի օգտին: ■

Փոխվարչապետի հերթական այցը Սյունիք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանն օգոստոսի 27-ին Սյունիքում էր՝ մարզում իրականացվող տարբեր ծրագրերի ընթացքին ծանոթանալու համար:

■ Մարզպետ Վահե Հակոբյանի ուղեկցությամբ փոխվարչապետը նախ այցելեց Տաթեւի ճոպանուղու Հալիձորի կայան, որտեղ կայացած խորհրդակցությանը քննարկվեցին «Տաթեւի վերածնունդ» ծրագրի իրականացման հետ կապված ընթացիկ հարցեր: Խորհրդակցությանը մասնակցում էին «Տաթեւի վերածնունդ» ծրագրի, «ՏաԹեւեր» ճոպանուղու տնօրինության, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչներ, վանական համալիրի հարակից համայնքների ղեկավարներ, ինչպես նաեւ «Տաթեւ» զբոսաշրջային կենտրոնի քաղաքաշինական խնդիրների համակարգման նպատակով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի անդամներ:

Ներկայացվեց վանական համալիրի հարակից տարածքի քաղաքաշինական միջավայրի կանոնակարգմանն ուղղված կառուցապատման նախագիծը, որը մշակվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվերով: «Տաթեւի վերածնունդ» ծրագրի ներկայացուցիչներն ու համայնքների ղեկավարներն իրենց նկատառումները հայտնեցին նախագծի վերաբերյալ: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ նախագիծը մեկ անգամ եւս կքննարկվի շահագրգիռ մարմինների ու կազմակերպությունների կողմից, եւ ստացված առաջարկությունները հաշվի կառնվեն այն լրամշակելիս:

Քննարկվեցին նաեւ «Տաթեւի վերածնունդ» ծրագրում ընդգրկված ութ համայնքում աղբահանության կազմակերպման, այդ նպատակով անհրաժեշտ միջոցների ներգրավման աղբյուրների, ինչպես նաեւ անտառային հատվածի սանիտարական վիճակի եւ մաքրության պահպանման հետ կապված հարցեր:

Ա. Գեւորգյանն այնուհետեւ մեկնեց Մեղրու տարածաշրջան, եղավ Մեղրու ինքնահոս համակարգի կառուցման վայրում: Լեհվազ համայնքի տարածքում, որտեղ պետք է լինի համակարգի գլխամասը, փոխվարչապետին ներկայացվեց ինքնահոս համակարգի նախագիծը:

Մեղրու ինքնահոս համակարգի կառուցման ծրագիրն իրականացվում է «Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի» շրջանակում՝ Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ: Նախատեսվում է կառուցել 32 կմ երկարությամբ ինքնահոս համակարգ, որը Մեղրի, Ագարակ եւ հարակից համայնքների համար կապահովի կայուն ջրամատակարարում, ինչպես նաեւ զգալի կնվազի էլեկտրաէներգիայի ծախսը: Համակարգի կառուցման համար տարածաշրջանում առկա են անհրաժեշտ պայմաններ. նախատեսվում է, որ ջուրը կվերցվի Մեղրի գետից:

Ներկայումս տարածաշրջանի ոռոգումն իրականացվում է 18 պոմպակայանի միջոցով, որոնք ջուր են մղում Արաքսից: Պոմպակայաններն արդեն ֆիզիկապես մաշված են, իսկ դրանց շահագործումը բավականին ծախսատար է: Պատասխանատուները տեղեկացրեցին, որ առաջիկայում կհայտարարվի շինարարական աշխատանքների մրցույթ, եւ հաղթող ընկերության որոշումից հետո համակարգի կառուցումը կմեկնարկի: Ա. Գեւորգյանը կարեւորեց աշխատանքների՝ ժամանակացույցի համաձայն իրականացումը՝ ընդգծելով համակարգի անհրաժեշտությունը տարածաշրջանի գյուղատնտեսական տնտեսությունների համար:

«Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիրը», որի վերաբերյալ համաձայնագիրն Աժ կողմից վավերացվել է 2013թ. հունիսին, ուղղված է ոռոգման համակարգի արդյունավետության բարձրացմանը: Բացի Մեղրու ինքնահոս համակարգից, ծրագրով նախատեսվում է նաեւ Քաղցրաշենի եւ Գեղարդալճի ինքնահոս համակարգերի կառուցում:

Փոխվարչապետն այնուհետեւ խորհրդակցություն անցկացրեց Մեղրու քաղաքապետարանում, որին մասնակցում էին նաեւ տարածաշրջանի համայնքների ղեկավարները: Քննարկվեցին համայնքներում իրականացվող ծրագրերին, համայնքների սեփական եկամուտների հավաքման ընթացքին, գյուղմթերքի իրացմանը, աշնան գյուղատնտեսական աշխատանքներին վերաբերող եւ մի շարք այլ հարցեր:

■ Աշխատանքային այցով Սյունիքի մարզում գտնվող ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանն օգոստոսի 28-ին ծանոթացավ մարզկենտրոն Կապանում իրականացվող ծրագրերին եւ ընթացիկ խնդիրներին:

Առավոտյան փոխվարչապետը մարզպետ Վահե Հակոբյանի եւ Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի ուղեկցությամբ շրջայց կատարեց քաղաքում: Նա այցելեց Կապանի թիվ 2 ավագ դպրոցի շինհրապարակ: Շենքի կառուցման համար պետբյուջեից նախատեսվել է 720 մլն դրամ: Ներկայումս արդեն կատարվել են մոտ 450 մլն դրամի շինարարական աշխատանքներ: Ըստ պատասխանատուների՝ նախատեսված ֆինանսական միջոցների հատկացման պարագայում դպրոցի կառուցումն ավարտին կհասցվի մեկ տարվա ընթացքում, եւ 2014թ. սեպտեմբերի 1-ին կրթօջախը պատրաստ կլինի շահագործման:

Փոխվարչապետն այցելեց նաեւ «Աջակցություն երիտասարդ ընտանիքների բնակարանաշինությանը» բնակարանային ապահովության սոցիալական ծրագրով նախատեսված բնակելի համալիրի կառուցման վայր: Զեկուցվեց, որ ծրագրի իրականացման առումով որոշակի խնդիրներ են առաջացել: Ա. Գեւորգյանը խոստացավ հարցը իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ քննարկել կառավարությունում՝ առաջացած խնդիրներին լուծումներ գտնելու համար:

Քաղաքապետը փոխվարչապետին տեղեկություններ ներկայացրեց նաեւ քաղաքի կենտրոնի բարեկարգման ծրագրերի մասին:

Մինչ Կապան այցելելը փոխվարչապետը ծանոթացել էր նաեւ Մեղրի եւ Քաջարան քաղաքների միջեւ՝ միջպետական ճանապարհի վրա վերակառուցվող կամրջի շինարարական աշխատանքներին: Այդ նպատակով պետբյուջեից հատկացվել է 52 մլն դրամ: Կամրջի կառուցման աշխատանքները կավարտվեն առաջիկա օրերին:

Մարզպետարանում անցկացված խորհրդակցությանը, որին մասնակցում էին Կապանի, Սիսիանի, Գորիսի, Ագարակի քաղաքապետերը, մարզպետարանի պատասխանատուներ, քննարկվեց համայնքներում իրականացվող ծրագրերի ընթացքը, ներկայացվեցին հրատապ լուծում պահանջող խնդիրներ:

Մարզպետարանի պատասխանատուները տեղեկություններ ներկայացրեցին քաղաքաշինական, գյուղատնտեսական աշխատանքների, համայնքների սեփական եկամուտների կառավարման վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության ներկայացուցիչների մասնակցությամբ առանձին քննարկվեց նաեւ Կապանում օդանավակայանի վերագոր-

Շարունակությունը՝ էջ 7

Ð²ðò²¼ðàôÚò Ð²Ø²ðÆÜ

Սյունիքի մարզի դպրախազը՝ միջազգային համաժողովում

Սկիզբը՝ էջ 2

աշխատանքի նոր մեթոդների իրազեկ դարձաք (ծանոթացաք) համաժողովում՝ հակակոռուպցիոն պայքարի ոլորտում:

– Ուշագրավ էր Չինաստանի Ժողովրդական Հանրապետության գերագույն դատախազության կողմից վերջին տարիներին կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում առավել ընդգրկուն եւ անզիջում պայքարի մասին տեղեկատվությունը, հատկապես պաշտոնատար անձանց կողմից կատարված չարաշահումների կանխարգելման, բացահայտման եւ քննության ուղղությամբ տարվող աշխատանքները: Այնտեղ մեծ ուշադրություն է դարձվում կոռուպցիայի դեմ պայքարին ինչպես ազգային, այնպես էլ անդրազգային հարթություններում, որի վառ դրսեւորումն է հանդիսանում այն հանգամանքը, որ ՉԺՀ գերագույն դատախազության գլխավոր դատախազը միաժամանակ համատեղում է հակակոռուպցիոն կառույցների միջազգային ասոցիացիայի նախագահի պատասխանատու պաշտոնը:

– Հետաքրքիր է, հակակոռուպցիոն պայքարի առումով (ըստ Ձեր ստացած տպավորության) աշխարհի ո՞ր երկրներում է հատկապես արդյունավետ աշխատանք տարվում եւ որոնցի՞ց կարելի է ինչ-որ բան ընդօրինակել ու ներդնել Հայաստանում:

– Ըստ իմ՝ մասնակից-պետությունների պատվիրակությունների ներկայացուցիչների ելույթներից ստացած տպավորության, հակակոռուպցիոն պայքարի առումով արդյունավետ աշխատանքներ են տարվում Մեծ Բրիտանիայում, Հերցոգովինայում, Ֆինլանդիայում, Թայլանդում, Կանադայում եւ այլուր:Հետխորհրդային երկրներից այդ առումով ուշագրավ է Բելառուսի Հանրապետության փորձը: Ի դեպ, մանրամասն ներկայացնելով կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ տարվող աշխատանքները, Բելոռուսի Հանրապետության գլխավոր դատախազ Ալեքսանդր Կոնյուկը նշեց, որ Բելառուսի Հանրապետության դատախազությունը հանդիսանում է պետական մարմինների համակարգի այն առանցքային օղակը, որը համակարգում է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի արդյունավետ կիրարկումը Բելառուսում: Բելառուսի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարն իրականացվում է հանցավորության եւ կոռուպցիայի դեմ պայքարի պետական ծրագրի շրջանակներում: Նկատի ունենալով, որ կոռուպցիոն հանցագործությունները քննության առումով դասվում են առավել բարդ եւ աշխատատար հանցագործությունների շարքին, 2012թ. հունվարի 1-ից սկսել է գործել Բելառուսի Հանրապետության քննչական կոմիտեն, որի բացառիկ ենթակայությանն է վերապահված կոռուպցիոն հանցագործությունների քննությունը: Միաժամանակ նշվեց, որ կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում Բելառուսի Հանրապետության ֆինանսական հետախուզության կողմից հայտնաբերվել է ապօրինի շրջանառության մեջ գտնվող շուրջ 12.000.000 դոլար գումար, իսկ մյուս իրավապահ մարմինների կողմից՝ եւս 28.600.000 դոլար:

– Տեղափոխվենք Հայաստան, ի՞նչ է իրենից ներկայացնում հակակոռուպցիոն պայքարի համակարգը մեզանում:

– Կոռուպցիան իրական վտանգ է ներկայացնում իշխանության, օրենքի գերակայության, ժողովրդավարության եւ մարդու իրավունքների, սոցիալական արդարության համար: Դեռեւս հասարակության գիտակցության մեջ արմատավորված է կոռուպցիայի՝ որպես «սոցիալական արդարության վերականգնման» կարծրատիպ, պակաս է ընկալվում այդ երեւույթի հասարակական վտանգավորության աստիճանը: Գիտակցելով կոռուպցիայի ռեալ վտանգը եւ վերլուծելով դրա դեմ պայքարի ներկայիս վիճակը, կարելի է փաստել, որ մեր երկրում վերջին տարիներին մի շարք ուղղություններով (պետական կառավարման, հարկային, մաքսային եւ բանկային համակարգերում) իրականացված համալիր բարեփոխումների արդյունքում ձեռնարկված քայլերը նկատելի դրական տեղաշարժ են առաջացրել: 2003թ. նոյեմբերի 6-ին ՀՀ կառավարության որոշմամբ ընդունվել է «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության եւ դրա իրականացման միջոցառումների մասին» առաջին ծրագիրը, որի նպատակը կոռուպցիայի հաղթահարումն է, այն ծնող եւ դրա տարածմանը նպաստող պատճառների ու պայմանների վերացումը: 2004թ. հունիսի 2-ին ստեղծվել է կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, որը գլխավորում երկրի վարչապետը: Խորհրդի կազմում ընդգրկված է նաեւ ՀՀ գլխավոր դատախազը: Վերը նշված ծրագրում կոռուպցիայի կանխարգելման եւ դրա դեմ պայքարի գործում էապես կարեւորվում են հասարակության լայն խավերի շահագրգիռ մասնակցության խնդիրը եւ հասարակական կազմակերպությունների, ոչ պետական մարմինների, ինչպես նաեւ քաղաքական բոլոր ուժերի մոնիտորինգի դերակատարումը: Շատ կարեւոր է ԶԼՄ-ների դերը, եւ անհրաժեշտ է ձեւավորել կոռուպցիայի դեմ պայքարում հանրային աջակցություն՝ քաղաքացիական հասարակության գործուն մասնակցության եւ հանրային քարոզչության միջոցով: Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի հատուկ պետական մարմիններ չկան: Սակայն երկրում գործում է հակակոռուպցիոն համակարգ, որի շրջանակներում տվյալ գործառույթներն իրականացնում են իրավապահ մարմինները՝ օրենսդրությամբ ամրագրված իրենց լիազորությունների սահմաններում: Մասնավորապես՝ ՀՀ դատախազությունը, ՀՀ ոստիկանությունը, Ազգային անվտանգության ծառայությունը եւ Հատուկ քննչական ծառայությունը ներգրավված են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեմ պայքարի գործում: Համապատասխան գործառույթներ ունի նաեւ Պետական եկամուտների կոմիտեն:

– Իսկ ինչպե՞ս եք գնահատում ՀՀ դատախազության հակակոռուպցիոն պայքարի ներկայիս մակարդակը: Ունե՞նք հակակոռուպցիոն որեւէ աշխատածեւ, գործելակերպ, որ ուշագրավ կարող է լինել այլ երկրների համար:

– Մեր երկրում, իրավական պետության եւ քաղաքացիական հասարակության կայացման, ինչպես նաեւ երկրում օրինականության եւ իրավակարգի պահպանման գործում, այդ թվում՝ կոռուպցիայի դեմ պայքարի գործում, էական դեր ունի դատախազությունը: Կոռուպցիայի դեմ պայքարը եղել եւ մնում է դատախազության մարմինների առաջնահերթ խնդիրը: Ելնելով այն հանգամանքից, որ Հայաստանի մասնակցությունը «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիային պահանջում է ոչ միայն անհրաժեշտ իրավական, այլ նաեւ կազմակերպական նախադրյալներ, ՀՀ գլխավոր դատախազի 2008թ. հունիսի 20-ի հրամանով ՀՀ գլխավոր դատախազության կազմում ստեղծվել է նոր կառուցվածքային ստորաբաժանում՝ կոռուպցիոն եւ կազմակերպված հանցագործությունների գործերով վարչություն: Բացի դրանից, ՀՀ գլխավոր դատախազի հրամանով հաստատվել է կոռուպցիոն հանցագործությունների ցանկը: Ըստ այդմ՝ կոռուպցիոն հանցագործություններ են համարվում՝ խարդախությունը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով (ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-րդ կետ), խարդախությունը, որը կատարվել է կաշառք ստանալու պատրվակով (ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ), յուրացնելը կամ վատնելը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով (ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ), առեւտրային կաշառքը (ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդված), պաշտոնեական լիազորությունները չարաշահելը կամ անցնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ եւ 309-րդ հոդվածներ), ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը (ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդված), կաշառք ստանալը (ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդված), կաշառք տալը (ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդված) եւ այլն, ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված շուրջ 30 արարք:

2011 եւ 2012թթ. ընթացքում հանրապետությունում այս ոլորտում հարուցվել է 705 քրեական գործ: 2012թ. դատարաններում քննված կոռուպցիոն բնույթի քրեական գործերով պատճառված վնասը կազմել է 2,8 մլրդ դրամ, այդ թվում՝ պետական գույքին պատճառված վնասը կազմել է 1,8 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց եւ ֆիզիկական անձանց գույքին՝ 1,0 մլրդ դրամ: Ասվածը վկայում է այս ոլորտում կատարված աշխատանքների մակարդակի մասին:

ՀՀ գլխավոր դատախազության կողմից հանրապետության տարածքներում պարբերաբար կազմակերպվել են «Կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման, բացահայտման եւ քննության առանձնահատկությունները» թեմայով փնջային խորհրդակցություններ, որոնց մասնակցել են իրավապահ մարմինների, պետական կառույցների եւ շահագրգիռ կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Կատարված աշխատանքների ցանկը կարելի է շարունակել, բայց բավարարվենք թվարկածով:

– Ի՞նչ ասել է ՄԱԿ-ի կոնվենցիա ընդդեմ կոռուպցիայի:

– «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիան ընդունվել է 2003թ. հոկտեմբերի 31-ին: Ընդհանրապես, կոռուպցիան խարխլում է ժողովրդավարական ինստիտուտներն ու արժեքները, բարոյական արժեքներն ու արդարությունը եւ վտանգում է կայուն զարգացումն ու օրենքի գերակայությունը: Կոնվենցիայի նպատակներն են՝ կոռուպցիան կանխարգելելը եւ դրա դեմ ավելի արդյունավետ եւ ներգործուն պայքարելուն ուղղված միջոցների խրախուսումը եւ ուժեղացումը կոռուպցիայի կանխարգելման եւ դրա դեմ պայքարում, այդ թվում՝ արժեքների վերադարձման ուղղությամբ միջազգային համագործակցության եւ տեխնիկական օգնության խրախուսումը, դյուրացումը եւ օժանդակումը, պետական գործերի եւ պետական սեփականության ազնիվ, պատասխանատու եւ պատշաճ կառավարման խրախուսումը:

– Եթե կարելի է՝ բնութագրեք, խնդրեմ, կոռուպցիա ասվածն ըստ մեր օրենսդրության: Կոռուպցիա ասվածն արդյո՞ք նույն կերպ է ընկալվում աշխարհի բոլոր պետություններում, թե՞ ամեն մի երկիր յուրովի է պատկերացնում:

– Ըստ ստուգաբանության՝ «Կոռուպցիա» բառն ունի լատինական ծագում, որ նշանակում է «կաշառք, փչացում, քայքայում, ծախվածություն»: Ներպետական օրենսդրությամբ կոռուպցիայի բնորոշումը դեռեւս չի տրվել: Միջազգային պրակտիկայում ձեւավորված տեսական միտքը կոռուպցիան բնորոշում է որպես վստահված իշխանության չարաշահում կամ հանրային իշխանության չարաշահում՝ հօգուտ մասնավոր շահի: Միջազգային իրավական կառուցակարգերով սահմանագծված են կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ մի շարք ընդհանուր չափորոշիչներ, որոնք կիրառություն են գտնում նաեւ մեզանում: Բազմաթիվ երկրներում կոռուպցիան դասվում է պետության եւ հասարակության նկատմամբ կատարվող ծանրագույն հանցագործությունների շարքին: ԱՄՆ-ի սահմանադրությամբ՝ կաշառակերությունն այն երկու հանցանքից մեկն է, որը կարող է առաջացնել Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի հրաժարականի պահանջ, իսկ Չինաստանում կաշառակերության համար սահմանված է մահապատիժ:

– Տեսեք՝ ինչ է ստացվում, ունենք ՄԱԿ-ի կոնվենցիա, հանրապետությունում ունենք համապատասխան օրեսդրություն եւ այդ խնդրի լուծմանը կոչված պետական ու հասարակական կառույցներ: Բայց արդյո՞ք այդ ամենի մասին տեղյակ է հանրապետության բնակչությունը:

– Ըստ իս՝ հակակոռուպցիոն ծրագրերը պետք է հիմնված լինեն նաեւ հրապարակայնության եւ թափանցիկության սկզբունքի վրա: Կոռուպցիայի դեմ պայքարը հասարակական սատարման կարիք ունի: Կոռուպցիայի դեմ պայքարում անգնահատելի է նաեւ զանգվածային լրատվության միջոցների դերը: Այս գործում հաջողությունների հասնելու համար պետք է մոբիլիզացվեն ոչ միայն իրավապահ, պետական մարմինների, այլ նաեւ հասարակության ուժերը (հասարակական կազմակերպությունների, ԶԼՄ-ների եւ այլն): Զարգացած քաղաքացիական հասարակությունը կոռուպցիայի զսպման կարեւորագույն միջոց է եւ պետք է հստակ գիտակցել, որ հասարակությանն անհրաժեշտ է ընդունել որպես կոռուպցիայի դեմ պայքարի հզոր ուժ:

Կոռուպցիայի դեմ պայքարում մեզանում հանրային աջակցության պասիվությունը, ըստ իս, պայմանավորված է մի շարք գործոններով, այդ թվում՝ տեղեկացվածության պակասով, եւ մենք շատ անելիքներ ունենք հասարակության կողմից կոռուպցիայի եւ դրա հետեւանքների հասարակական վտանգավորության աստիճանի իրավագիտակցության արմատավորման ուղղությամբ:

– Ի՞նչ ուշագրավ շփումներ, հանդիպումներ ունեցաք համաժողովի շրջանակում (բուն սեմինարից դուրս):

– Սեմինարից դուրս շփումներ ունեցանք Չինաստանի, Թայլանդի, Պակիստանի, Մոլդովայի, Բելառուսի, Ավստրիայի եւ այլ պատվիրակությունների ներկայացուցիչների հետ:

– Որքանով տեղյակ ենք, Դուք (ոչ որպես մարզի դատախազ) քանիցս մասնակցել եք միջազգային այլ համաժողովների: Արդյո՞ք միջազգային շփումները գործնական ու կիրառական անդրադարձ են ունենում մեր հանրապետության դատախազության պրակտիկայում:

– Անկասկած, միջազգային շփումները շատ օգտակար եւ ուսանելի են: Այդ շփումների ընթացքում հայտնի դարձած դատախազական աշխատանքի ձեւերն ու մեթոդները գործնականում մեզանում կիրառություն են գտնում այնքանով, որքանով թույլ է տալիս մեր օրենսդրությունը:

– Փորձենք ինչ-որ չափով տեղայնացնել մեր զրույցը. վերջին տարիներին Սյունիքում ի՞նչ աշխատանքներ են կատարվել կոռուպցիայի դեմ պայքարի առումով եւ ի՞նչ եք նախատեսում անել հետայսու:

– Կարելի է փաստել, որ կոռուպցիայի դեմ պայքարի առումով մեր մարզում կատարված աշխատանքները դեռեւս բավարար չեն, եւ նախատեսում ենք այս ուղղությամբ ակտիվացնել մեր գործունեությունը:

– Կոռուպցիոն ռիսկերը հատկապես Սյունիքի մարզի ո՞ր ոլորտներում են մեծ:

– Կոռուպցիոն ռիսկերը բարձր են առողջապահության, կրթության, պետական միջոցներով զանազան ծրագրերի իրականացման, անտառների եւ ընդերքի պահպանության ու այլ ոլորտներում:

– Ներկայումս մարզի իրավապահ մարմինների վարույթում կա՞ն քննվող գործեր, որոնք կարելի է դիտարկել հակակոռուպցիոն պայքարի համատեքստում:

– Ներկա պահին մարզի քննչական բաժնում քննվում է կոռուպցիոն բնույթի երկու քրեական գործ:

– Եվ վերջին հարցը, որը միգուցե եւ արծարծված լինի միջազգային համաժողովում՝ ճի՞շտ է քաղաքական կոռուպցիա արտահայտությունը, եթե այո, ապա կուզենայինք իմանալ դրա էությունը:

– Միջազգային-իրավական կառուցակարգերով սահմանված չափորոշիչներով եւ տեսության մեջ ընդունված է կոռուպցիան դիտարկել երկու մակարդակում՝ քաղաքական եւ վարչական կոռուպցիա: Քաղաքական կոռուպցիան, անձնական օգուտից կամ շահից դրդված քաղաքական գործիչների եւ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից քաղաքական որոշումներ կայացնելիս իրենց վստահված քաղաքական իշխանության չարաշահումն է:

– Շնորհակալություն հարցազրույցի համար:

– Ես նույնպես շնորհակալ եմ:

Հարցազրույցը՝
ՆՈՒԲԱՐ ԴԱՎԹՅԱՆԻ

Այսօրվա երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՇԱԲԱԹ • 7 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 23 (296)

²¼¶ ²ÚÆÜ ´ ²Ü²Î

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ. «Ձենքն ամուր ձեռքերում պիտի լինի»

2013թ. Գորիսի տարածաշրջանում անցկացված գարնանային զորակոչի, այն իրականացնելիս ծագած խնդիրների, բանակում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտի մասին է հարցազրույցը Գորիսի զինկոմ, գնդապետ Մելիքսեթ Պողոսյանի հետ:

Սկիզբը՝ էջ 1

ժեք զինվոր տանք հայոց բանակին: Եթե համեմատենք 20 տարի առաջ անցկացված զորակոչի հետ, ապա կարող ենք ասել, որ այսօր նվազագույնի է հասցվել հիվանդ զինվորի՝ բանակում ծառայելու հավանականությունը: Առողջական խնդիրներ ունեցող զինվորի ծառայությունն ազդում է բանակի և՛ մարտական պատրաստության, և՛ բարոյահոգեբանական մթնոլորտի վրա:

– Բանակ զորակոչվող պատանին հաճույքով ու պատրաստակա՞մ է գնում պարտադիր զինծառայության, թե՞ դժվարության եք հանդիպում զորակոչն իրականացնելիս:

– Դժվարություններ, իհարկե, կան, բայց որ ասեմ, անհաղթահարելի խոչընդոտներ են, այդպես չէ: Բնականաբար, յուրաքանչյուր աշխատանքի մեջ էլ դժվարություններ լինում են, հիմնական դժվարությունն արտերկրում բնակվող պատանիների հետ է կապված, որոնց որոնողական աշխատանքների միջոցով փորձում ենք գտնել եւ հետ բերել: Եթե մենք այդ քայլերին չդիմեինք, չէինք կարող կատարել մեր պլանը, դեռ ավելին ասեմ՝ գերակատարել այն: Մեր աշխատանքները կատարելիս ամենացավոտ հարցը, որին բախվում ենք, զանազան հիվանդություններն են: Երբ սկսում ենք մատաղ սերնդի հետ աշխատանքները, երբեմն հայտնաբերում ենք հիվանդություններ, որոնց մասին նույնիսկ ծնողները տեղյակ չեն: Սա ցավալի է այնքանով, որ ծնողն այդքան ժամանակ իր երեխային չի տանում հետազոտման, կարելի է ասել՝ անտարբերություն է ցուցաբերում: Մեր խնդրանքն այն է, որ գոնե մինչեւ զորակոչի տարիքին հասնելը ծնողները տանեն հետազոտման, կամ գոնե մեր կողմից հիվանդությունը բացահայտելուց հետո հետեւողական լինեն. չէ՞ որ զավակի առողջությունն ամենամեծ հարստությունն է:

– Պարո՛ն գնդապետ, մեկ հարցի հետ ծնողները, այնուամենայնիվ, բախվում են, որը զինկոմիսարիատով չէ պայմանավորված: Դուք նշում եք, որ Ձեր նպատակն է բանակ ուղարկել միանգամայն առողջ զինծառայողի: Ծնողները բողոքում են, որ բուժզննման գնալիս չնչին գումար են տրամադրում, որպեսզի երեւանում երբեմն մի քանի օր տեւող հետազոտումն անցնեն:

– Պետականորեն այդ հարցը լուծվում է, սակայն շուկայական գներին այն չի համապատասխանում: Այդ հարցի լուծումը պայմանավորված չէ զինկոմիսարիատով, թեպետեւ այդ հարցով մի քանի անգամ դիմել ենք ՀՀ պաշտպանության նախարարություն:

– Հնարավոր չէ՞, որ մի շարք հիվանդությունների զննումը տեղի ունենա հենց տարածաշրջանում՝ շրջանային հիվանդանոցներում:

– Հնարավոր է, եթե մենք ապահովված լինենք լաբորատոր բոլոր անհրաժեշտ սարքավորումներով: Մի քանի անգամ դիմել ենք, որ գոնե մարզային մասշտաբով տարածաշրջանի հիվանդանոցներից մեկում կարողանան անհրաժեշտ հետազոտումներ անել, բայց դեռ որեւէ արդյունքի չենք հասել: Իհարկե, որոշ թեթեւ վիրահատական բուժումներ մարզի հիվանդանոցներում իրականացնում են, բայց ավելի լուրջ հիվանդությունների հետազոտման համար անպայման պետք է ուղարկենք Երեւան:

– Այնուամենայնիվ, մի մասը երեւի ոգեւորությամբ, տոնական տրամադրությամբ, քեֆ-ուրախությամբ է բանակ ճանապարհում իր զավակին:

– Այսօր ժողովրդի բարոյահոգեբանական վիճակը փոխվել է. չէ՞ որ գնում են հաղթանակած բանակ, անմիջապես կապ ենք հաստատում տվյալ զորամասի հետ՝ տեղեկություններ տալով ծնողներին: Եթե զինծառայողի ծնողն առողջական խնդիր է ունենում, ապա մենք ուղեգիր ենք տալիս՝ բուժումն անվճար կազմակերպելու համար: Իսկ ընդհանուր առմամբ զինծառայողի հետ կապված ամեն հարց զորամասի հրամանատարությունը լուծում է զինկոմիսարիատի հետ համատեղ:

– Բանակից վերադառնալուց հետո պայմանագրային զինծառայության անցնելու համար դիմողներ հաճախակի՞ են լինում:

– Այս պահին հանրապետության բոլոր զորամասերում պայմանագրային զինծառայողներ են ընդունում: Իհարկե, աշխատանք չունենալու պատճառով հիմա շատ են լքում հայրենիքը, բայց հայրենիքի ոգով ապրող զինծառայողներ կան, ովքեր գալիս են եւ դիմում պայմանագրային զինծառայության անցնելու համար, մենք էլ հնարավորության սահմաններում աջակցում ենք նրանց: Պայմանագրային ճանապարհով այսօր շատերն են համալրում հայոց բանակի շարքերը: Այդ առումով ակտիվացման միտում կա, քանի որ օգտվում են մի շարք արտոնություններից, ինչպես նաեւ ապահովվում են աշխատանքով:

– Ամենամյա վարժահավաքներն անցկացնելիս ինչպիսի՞ խոչընդոտների եք հանդիպում:

– Ինձ համար վարժահավաքն ավելի կարեւոր է, քան զորակոչը: Մենք մշտապես հետեւում ենք զինապարտների գործունեությանը: Ես միշտ մի բան եմ ասել, որ պարտադիր զինծառայությունն ավարտած մարդը պիտի հասկանա, որ ինքն իր կյանքը պիտի տա հայրենիքին՝ առաջնորդվելով «Իմ տունը, իմ հայրենիքն իմ բանակն է» կարգախոսով: Հայրենիքի համար մարդը պիտի պատրաստակամ լինի իր կյանքը տալու, հայրենիքը մեղավոր չէ, որ դարեր շարունակ իր պետականությունը կորցրել է, քո ապրած կյանքով պիտի ապացուցես հայրենանվիրությունը: Գորիսի շրջանում վարժահավաքը միշտ էլ բնականոն հունով է ընթանում: Մի պարզ ճշմարտություն կա. մենք թվով քիչ ենք, բայց պետք է հնարամիտ ու անձնուրաց լինենք հատկապես պատերազմական իրավիճակներում, կարողանանք առաջին գծում արժանապատվորեն պաշտպանել մեր հայրենիքը:

– Կարո՞ղ ենք ասել, որ Գորիսի պետական մարմինները, հասարակական միջավայրը կարողանում են միջամտել, աջակցել զորակոչի, վարժահավաքի կազմակերպման ընթացքին:

– Ամեն նմանատիպ միջոցառում անցկացնելիս համագործակցում ենք և՛ ոստիկանության, և՛ տեղական իշխանությունների հետ: Համագործակցության պլան միշտ էլ կա. զորակոչը սկսելուց առաջ համապատասխան գրություն ենք ուղարկում տեղական իշխանության մարմիններին, ոստիկանապետին, որպեսզի այդ օրը ժողովուրդը զգա, որ պետությունը կանգնած է իր թիկունքին:

– Վերջին 1-2 տարում հայոց բանակում տեղի ունեցած ցավալի իրադարձությունները՝ սպանություններ, ինքնասպանություններ, հանրության մեջ ինչ-որ սկսեցին շահարկումների տեղիք տալ: Ի՞նչ կարծիքի եք բանակում տեղի ունեցող նման արատավոր երեւույթների մասին:

– Իհարկե, նմանատիպ երեւույթները դատապարտելի են, բայց երբեմն դրանցից խուսափել չի լինում: Բանակում ունենք աղանդավորական շարժումների հետեւողներ, ովքեր, դառնալով 19 տարեկան, ինքնասպանություն են գործում՝ ազդելով բանակի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա: Աղանդը պիտի բանակ չմտնի: Մենք, ճիշտ է, զինակոչիկի անձնական գործում նշում ենք աղանդավոր լինելու մասին, բայց շատ հաճախ էլ այն գաղտնի է մնում: Բացի դրանից՝ լինում են նաեւ անձնական բնույթի խնդիրներ, նաեւ հոգեբանորեն անպատրաստ պատանիներ, ովքեր չեն կարող դիմանալ բանակային ռեժիմին, կարգուկանոնին եւ դրանով խնդիրներ են ստեղծում թե՛ իրենց համար, թե՛ հրամանատարների: Բացի դրանից՝ հասարակությունը պիտի ուժեղ ու կայուն լինի, որպեսզի նորմալ ընտանիքից երեխան գնա բանակ. մեկը ճիշտ է դաստիարակվում, մյուսն էլ «մոլախոտ» է: Հրամանատարի հոտառությունն այնքան ուժեղ պիտի լինի, որ կարողանա ճիշտ ժամանակին կանխել վտանգը, զինվորի թույլ տեղը գտնել: Ոչ մի հրամանատար հաստատ չի ցանկանա, որ իր զինվորի մատը նույնիսկ փուշ մտնի:

– Վերջերս շատ է քննարկվում Ռուսաստանի կողմից Ադրբեջանին արդիական զենք-զինամթերքի տրամադրման հարցը: Մեր երկրի անվտանգությանը որքանո՞վ է այն սպառնում:

– Ժամանակները փոխվում են, այսօր իրենք իրենց հերթին են ուժեղանում, մենք՝ մեր հերթին: Բայց հիմա ոչ այնքան կարեւոր է զենք-զինամթերքի առկայությունը, որքան դրանք կիրառելու հնարավորությունն ու կարողությունը, զենքը պիտի խելքով ղեկավարվի: Զենքն ամուր ձեռքերում պիտի լինի, ոգին ամուր պիտի լինի, քաջի համար անհնարին ոչինչ չպիտի լինի: Զորքի հրամանատարը պիտի խիզախ լինի, գլուխը պիտի խաղաղ ժամանակ աշխատի, պատերազմի ժամանակ մինչեւ վերջ շունչը տա, սա է պատերազմի մեխը: Ռազմական հավասարակշռությունը սրանից չի փոխվել, քանի որ ադրբեջանցիներն այնքան էլ լավ չեն կարողանում տիրապետել նոր զենքերին:

– Եթե Աստված մի՛ արասցե, պատերազմը վերսկսվի, իսկ մենք բոլորս էլ քաջ գիտակցում ենք, որ անհավանական չէ այդպիսի իրավիճակը, որքանո՞վ ենք պատրաստ այդ արհավիրքին դիմակայելուն:

– Այսօրվա մեր գործող բանակն այնպես չէ, որ բոլոր խնդիրները լուծել է, բայց ամեն զորամաս իր խնդիրը գիտի, թե որն ինչպես պիտի պաշտպանի մեր սահմանները: Եթե որեւէ պատերազմական վիճակ ստեղծվի, ապա ամեն զինվոր իր անելիքը գիտի, թե որտեղ պիտի կասեցնի հակառակորդին, որ խրամատում, որ ուղղությամբ պիտի կանգնի: Մենակ բանակի վրա չէ, որ հույս ենք դրել, շարքային զինվորն էլ, որ 2 տարի ծառայել է հայոց բանակում, այնքան հավատ ունի մեր հանդեպ, որ անմիջապես ոտքի կկանգնի: Հայրենասիրությունը բոլորիս արյան մեջ է:

Հարցազրույցը՝
ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ՍՅՈՒՆՅԱՑ

Մելիքսեթ Պողոսյան. ծնվել է 1960թ. օգոստոսի 31-ին Գորիսի Տեղ գյուղում: 1968-79թթ. սովորել է Տեղի միջնակարգ դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո աշխատանքի է ընդունվել գյուղի կոլտնտեսությունում՝ ձեռք բերելով հայրենասերի եւ աշխատասերի բարի համբավ: 1988թ. դարձել է Արցախյան շարժման մասնակից եւ 1989թ. միավորելով Տեղ գյուղի կամավորներին՝ ստեղծել «Մելիք-Բարխուդար» ջոկատը՝ ընտրվելով ջոկատի հրամանատար: 1989-90թթ. մասնակցել է Գորիսի շրջանի Տեղ, Խնձորեսկ, Կոռնիձոր, Շուռնուխ, Խանածախ, Խոզնավար գյուղերի պաշտպանությանը: Մ.Պողոսյանի հրամանատարությամբ «Թորոսի խութ» կոչվող տարածքի գրավումը դարձավ Զանգեզուրյան ճակատի բեկումնային հաղթանակներից մեկը, որի տրամաբանական ավարտը դարձավ Լաչինի մարդասիրական միջանցքի գրավումը: 1990թ. նոյեմբերից մինչեւ 1993թ. հունվարը ծառայել է Գորիսի զորամասում: Ծառայության հետ համատեղ 1992-96թթ. սովորել է «Սյունիք» ինստիտուտում՝ իրավագիտության բաժնում: 1993-94թթ. մասնակցել է հարավարեւելյան ուղղությամբ ընթացող մարտական գործողություններին՝ Կուբաթլիի, Ջեբրայիլի, Զանգելանի, Ֆիզուլիի գրավմանը, որտեղ վիրավորվել է՝ ստանալով կոնտուզիա: 1993-2007թթ. զբաղեցրել է տարբեր զորամասերում մոտոհրաձգային գումարտակի եւ զորամասի հրամանատարի պաշտոններ: 2007թ.-ից առ այսօր զբաղեցնում է Գորիսի զինվորական կոմիսարի պաշտոնը: Մարտական գործողությունների ժամանակ ցուցաբերած խիզախության, հայրենասիրության եւ ՀՀ զինված ուժերի կայացման գործում ներդրած բացառիկ ավանդի համար գնդապետ Մելիքսեթ Պողոսյանը բազմիցս պարգեւատրվել է շքանշաններով ու մեդալներով:

Ամուսնացած է, ունի երկու տղա:

ՄԱՐՏԻՆ ՁԻԼՖՈՒՂԱՐՅԱՆ. «Հավաստիացնում եմ՝ քրեական գործում Սուրեն Խաչատրյանի մասնակցության վերաբերյալ որեւէ ապացույց չկա»



ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ՄԱՐՏԻՆ ՁԻԼՖՈՒՂԱՐՅԱՆ

ԱՍՈՒԼԻՍ

2013թ. հունիսի 1-ին Գորիսում՝ Սուրեն Խաչատրյանի առանձնատան մոտ տեղի ունեցած ողբերգական պատահարի նախաքննությունը շարունակվում է:

«Սյունյաց երկիրը», ինչպես հայտարարվել է միջադեպին հաջորդած մեր հրապարակումներում, որդեգրել է նախաքննությանը չխանգարելու, Գորիսում կրքերն ավելի չբորբոքելու, ժամանակ առ ժամանակ տարածվող նորանոր եւ տարաբնույթ ասեկոսեները չլուսաբանելու պահվածք: Եվ անցած երեք ամսում թերթը հավատարիմ է մնացել այդ ուղեգծին:

Միաժամանակ տեսնում ենք, որ նախաքննությանը զուգահեռ միջադեպի կողմերի շահերը ներկայացնող փաստաբանները բուն քննական գործընթացին մասնակցելուց առավել պայքարում են իրենց համար նպաստավոր հանրային կարծիքի ձեւավորման, հանրության տրամադրություններն ուղղորդելու համար: Եվ այդ ընթացքում դատապաշտպանները երբեմն գործին առնչվող էական բնույթի նորություններ են հրապարակում, որոնց կողքով լռությամբ անցնելը նույնպես ճիշտ չէ եւ ոչ տրամաբանական, քանզի մեր ընթերցողը եւս այդ տեղեկություններին իրազեկ լինելու իրավունք ունի: Հենց այդ շարժառիթների դրդմամբ էլ «Սյունյաց երկիրը» դրականորեն արձագանքեց Տիգրան Խաչատրյանի փաստաբաններ Ռուբեն Սահակյանի եւ Մարտին Ձիլֆուղարյանի՝ օգոստոսի 28-ին Երեւանում հրավիրված ասուլիսին մասնակցելու հրավերին: Ձեռնպահ մնալով սեփական դիտարկումներից ու լրագրողական հետաքննությունից (մինչեւ նախաքննության ավարտը), ներկայացնում ենք ասուլիսի մասին տարածված տեղեկատվություններից մեկը:

■

Օգոստոսի 28-ին մամուլի ասուլիսում Սյունիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի Գորիսի տան մոտ տեղի ունեցած ողբերգական իրադարձության փաստի առթիվ հարուցված քրեական գործով մեղադրվողներ Տիգրան Խաչատրյանի պաշտպան Ռուբեն Սահակյանը եւ Զարգանդ Նիկողոսյանի պաշտպան Մարտին Ձիլֆուղարյանն անդրադարձան քրեական գործի ընթացքին:

Ռուբեն Սահակյանը Բուդաղյանների պաշտպան Հայկ Ալումյանին մեղադրեց ապատեղեկատվություն տարածելու մեջ: Նա նշեց, որ շատ քիչ է անդրադարձ կատարվում Նիկոլայ Աբրահամյանի վիրավորվելու փաստին, փոխարենը շատ է խոսվում այն մասին, թե Բուդաղյանին կրակել են թիկունքից: Անդրադառնալով Հայկ Ալումյանին՝ նա ասաց. **«Եթե քո պաշտպանյալի մարմնի մեջ եղել է ընդամենը մեկ գնդակ, որը դուրս չի եկել եւ եթե մուտքը լյարդի շրջանից է եղել, ուրեմն դիմացից է կրակոցը եղել: Մեր հրազենները դեռեւս սովորություն չունեն շրջանցել մարդու մարմինը 180 աստիճան, հետո մխրճվել մարդու մարմնի մեջ»:**

Անդրադառնալով Զարգանդ Նիկողոսյանին՝ Ռուբեն Սահակյանն ասաց. «Զարգանդ Նիկողոսյանն ապօրինի է գտնվում կալանքի տակ, նա վաղուց պետք է ազատ լիներ, որովհետեւ նրա հասցրած վնասվածքը միջին ծանրության աստիճանի էլ չի ձգում: Բացի այդ նա կրակոցներն արձակել է միայն այն բանից հետո, երբ տեսել է կրակոցներ եւ իր մտերիմ Աբրահամյանն ընկել է ու օգնություն կանչել»:

Նա նոնսենս համարեց, երբ մի վնասվածքի համար երկու հոգու են մեղադրում: **«Մենք իրավունք ունենք դժգոհել նախաքննական մարմնից եւ ոչ թե Բուդաղյանները, կամ նրանց փաստաբանը»,** – ասաց նա եւ ավելացրեց, որ այդ վերջիններս են իրականությունը գլխիվայր շուռ տալիս:

■

Մարտին Ձիլֆուղարյանն ասաց, որ իրենք ներկայացնում են գործն իրավական տեսանկյունից: **«Նշված արարքը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության սահմաններում: Կան բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են նրանց անմեղությունը»,** – ասաց նա:

Պաշտպանը պատմեց, որ Զարգանդ Նիկողոսյանը եղել է Սուրեն Խաչատրյանի օգնականը, նա պրոֆեսիոնալ սպա է, մասնակցել է հանրապետական մարզային հրաձգային մրցումներին, զբաղեցրել է առաջին ու երկրորդ տեղերը եւ նա հրաշալի տիրապետել է զենքին: **«Նա վեց անգամ կրակել է 5-10 մետրից եւ չէր կարող վրիպել, հետեւաբար նրա քայլերը կանխարգելիչ նպատակ ունեին եւ կրակել է միայն նրանից հետո, երբ Ավետիք Բուդաղյանը կրակել է Նիկոլայ Աբրահամյանի վրա»,** – ասաց նա:

Այսպիսով պաշտպանական կողմը գտնում է, որ այսօր բավարար ապացույցներ կան, որ Զարգանդ Նիկողոսյանի նկատմամբ քրեական հետապնդումը վերացնեն: **«Ամենակարեւոր հարցն այն է, թե եղել է զինված հարձակում Սուրեն Խաչատրյանի տան վրա, թե ոչ: Ցուցմունքներից պարզ է դառնում, որ եղբայրները երկուսով երեք զենքով հարձակվել են տան վրա, եւ նրանց գլխավոր թիրախը եղել են Սուրեն Խաչատրյանը եւ Զարգանդ Նիկողոսյանը»,** – ասաց Մարտին Ձիլֆուղարյանը:

Ինչ վերաբերում է Սուրեն Խաչատրյանի որդու գործողություններին, ապա պաշտպանն ասաց. **«Դուք պատկերացնում եք՝ տասնինը տարեկան տղան, ով տեսնում է երկու երիտասարդներ երեք զենքով հարձակվում են եւ պահանջում են ցեղի, ծնողի վերացումը, եւ երբ մայրը մոտենում է՝ փրկելու, ամենավատ խոսքերով մորն են հայհոյում եւ ասում՝ Լորետայից կսկսեմ, դուք պատկերացնո՞ւմ եք, թե նորմալ հայ տղան ինչ կանի»:**

Խոսելով Սուրեն Խաչատրյանի մասին՝ Մարտին Ձիլֆուղարյանը նշեց. **«Մենք այստեղ Սուրեն Խաչատրյանի պաշտպանները չենք, սակայն շահարկվում է նրա մասնակցությունը: Ես ձեզ հավաստիացնում եմ, որ քրեական գործում նրա մասնակցության վերաբերյալ որեւէ ապացույց չկա»:** Նա ասաց, որ Սուրեն Խաչատրյանի ննջասենյակը մի քանի պատ հետ է եղել եւ նա չէր կարող լսել աղմուկը:

«Սուրեն Խաչատրյանը մեղադրյալ չի եւ չի էլ լինելու, համոզված եղեք: Մենք չենք քննում Սուրեն Խաչատրյանի գործը, այդպիսի գործ բնության մեջ գոյություն չունի», – ասաց Ռուբեն Սահակյանը եւ նշեց, որ նախկին մարզպետը շատ խմած ու քնած է եղել, առավել եւս պատուհանները ձայնամեկուսիչ են եղել: Նա նշեց, որ Սուրեն Խաչատրյանը հասարակության մի մասի համար ընդունելի չէ:

Ինչ վերաբերում է Տիգրան Խաչատրյանի՝ թմրանյութեր օգտագործելու լուրերին, ապա պաշտպանն ասաց, որ նրա օրգանիզմում թմրաակալոիդների հետքեր են հայտնաբերվել եւ այնպիսի եզրակացություն չկա, թե նա դեպքի ժամանակ թմրանյութերի ազդեցության տակ է գտնվել: **«Մարդու մազի մեջ կարող են հետքերը մնալ հազարամյակներ»,** – ասաց նա:

Հարցին, թե մեծ ռիսկ չէ նման մարդու պաշտպանել՝ Ռուբեն Սահակյանն ասաց, որ ինքը պաշտպանել է թուրք, հայ, վրացի, բռնաբարող, մարդասպան, իսկ սա մի դեպք է, երբ սպանության սպառնալիք է եղել եւ իրենց վստահորդները գործել են անհրաժեշտ պաշտպանության սահմաններում:

Ռուբեն Սահակյանն անդրադարձավ նաեւ զինվորական դատախազությանը: **«Մենք մինչեւ ե՞րբ պետք է այդպիսի նախաքննություն ունենանք: Երբեմն սկսում եմ մտածել, թե ավելի լավ չէ բացարկ հայտարարենք զինվորական դատախազությանը, սակայն մյուս կողմից էլ կարծում ենք, թե ինչ տարբերություն՝ զինվորական դատախազությո՞ւնը կքննի, թե՞ ՀՔԾ-ն կամ հարկայինը: Մտավախություն ունենք, որ գուցե Արտակ Բուդաղյանը զինվորական է եւ նրա օգտին ավելի գործողություններ կատարեն»,** – ասաց նա:

mardik.am

Փոխվարչապետի հերթական այցը Սյունիք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Սկիզբը՝ էջ 4

ծարկման հարցը: Ոլորտի պատասխանատուները ներկայացրեցին վերագործարկման ծրագիրը:

Օդանավակայանի շահագործումը փոխվարչապետը կարեւոր համարեց մարզի բնակչության համար՝ նշելով, որ ծրագրի իրականացման համար առկա է նաեւ ՀՀ նախագահի հանձնարարականը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ մարզպետը նաեւ տարածաշրջանի գործարարների հետ կքննարկի ծրագիրը, եւ վերջնական ֆինանսական հաշվարկներն ու առաջարկությունները սեպտեմբերին կներկայացվեն կառավարություն:

mta.gov.am

ՀԱՄԼԵՏ ՄԿՐՏՉՅԱՆ. «Չխեղաթյուրենք Գորիսում պաշտպանության խորհրդի ստեղծման պատմությունը»

ԱՐՁԱԳԱՆՔ

Օրերս հրապարակվել է Գորիսում հունիսի 1-ին տեղի ունեցած միջադեպի ժամանակ զոհված Ավետիք Բուդաղյանի եւ հրազենային վնասվածք ստացած Արտակ Բուդաղյանի հոր՝ Էմիլ Բուդաղյանի բաց նամակը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին: Նամակի մի միտք, սակայն, ոչ միանշանակ է ընդունվել Գորիսում: Ահա Էմիլ Բուդաղյանի արտահայտած այդ միտքը. ՀՀ նախագահին դիմելով նա ասում է. «Իմ մասին Դուք՝ լինելով սյունեցի եւ պատերազմի մասնակից, հավանաբար, նույնպես գիտեք՝ պատերազմական տարիներին ես հանդիսացել եմ պաշտպանական խորհրդի անդամ, որն անձամբ եմ ստեղծել»:

«Սյունյաց երկրի» խմբագրությունում այդ առիթով ստացված բազմաթիվ արձագանքներից ամենաուշագրավը Համլետ Մկրտչյանի խոսքն է՝ օգոստոսի 29-ին հեռախոսով հաղորդած, որը ներկայացնում ենք ստորեւ: Ահա. «Նախ չէի ցանկանա, որ հունիսի 1-ի ողբերգության նախաքննությանը զուգահեռ ներկայացվեին Արցախյան ազատամարտի ժամանակ Գորիսում տեղի ունեցած իրադարձությունները, մանավանդ որ դրանք բոլորովին կապ չունեն միմյանց հետ, մանավանդ որ որոշ մարդիկ 20-25 տարվա վաղեմության իրադարձությունները ներկայացնում են աղավաղված ձեւով: Ինչ վերաբերում է 1989թ. աշնանը Գորիսում պաշտպանության խորհրդի ստեղծմանը, ապա դրա հետ Էմիլ Բուդաղյանը որեւէ առնչություն չի ունեցել: Նրա հայտարարությունը, թե ինքն է ստեղծել պաշտպանության խորհուրդը, ամբողջապես հերքում եմ: Ինքը նման բան ասելու իրավունք չունի, ո՞վ է եղել ինքը, որ այդ ժամանակ Գորիսում պաշտպանության խորհուրդ ստեղծեր:

Պաշտպանության խորհրդի հիմնադիրը եւ նախագահն ինքս եմ եղել, այդ մասին ամբողջ Գորիսը գիտի, այդ մասին գիտեն ինքնապաշտպանական բոլոր ջոկատների հրամանատարները, այդ մասին գիտեն Շարժման առաջնորդները: Ընդհանրապես անհամեստություն եմ համարել այդ մասին խոսելը, հիմա էլ խոսում եմ հարկադրաբար, քանի որ ինքնապաշտպանության կազմակերպիչներիս առջեւ կեղծվում է ոչ վաղ անցյալի պատմությունը, Արցախյան շարժման մաքրամաքուր պատմությունը:

Գորիսի պաշտպանության խորհրդի ստեղծման գործում ինձ շատ են օգնել Համլետ Ծատրյանը, Մելս Մելքումյանը, ուրիշներ, թեեւ



նրանք այդպես էլ չմտան խորհրդի կազմի մեջ, որովհետեւ խորհուրդը միանգամայն այլ սկզբունքով կազմավորվեց, ինչը ձեւակերպված էր կանոնադրությամբ:

1989թ. աշնանն անհրաժեշտություն էր առաջացել Գորիսում ստեղծել մի մարմին, որը կհանդիսանար քաղաքում եւ գյուղերի մեծ մասում ստեղծված ու ստեղծվող ինքնապաշտպանական ջոկատների գործունեության համակարգողը: Նման խորհուրդ ստեղծելը ժամանակի պահանջն էր: Այդ մարմինը դարձավ Գորիսի պաշտպանության խորհուրդը, որը սկզբնական շրջանում համակարգում էր նաեւ Սյունիքի մյուս շրջանների ջոկատների գործունեությունը: 15 հոգուց բաղկացած խորհրդի անդամներ էին նրանք, ովքեր առաջադրվել էին գյուղերի եւ քաղաքի թաղամասերի ինքնապաշտպանական ջոկատների կողմից: Միայն Քոլատակի ջոկատին իրավունք վերապահվեց խորհրդի երեք անդամ առաջադրել, քանի որ այդ ջոկատն այն ժամանակ ամենահզորն ու մարդաշատն էր: Էմիլ Բուդաղյանին էլ առաջադրեցին Խնձորեսկի կամավորականները՝ նկատի ունենալով, որ նա շրջանի շինվարչության պետերից մեկն է եւ, ի թիվս մի քանի տնտեսական ղեկավարների, կարող է ինչ-որ չափով նյութական, տեխնիկական աջակցություն ցույց տալ խորհրդին: Այդպես է եղել… Եվ երբեք որեւէ խոսք չի գնացել նրան խորհրդի նախագահ ընտրելու կամ նշանակելու մասին: Հիմա էլ տեղին չէ սեփական անձին չեղած բաներ վերագրելն ու մյուս տղաների արածը ստվերում թողնելը: Եկեք չաղավաղենք Արցախյան ազատամարտում գորիսեցիների մասնակցության պատմությունը: Չաղավաղենք Գորիսի պաշտպանության ստեղծման պատմությունը: Եկեք 20-25 տարվա հեռավորությունից անձնական նկատառումներով դատողություններ չանենք այդ օրերի մասին»:

Այունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՇԱԲԱԹ • 7 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 23 (296)

Հերմինե Նաղդալյանի հետ 409,000,000 դրամի պայմանագիր է կնքվել

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՄՈՒԼ

Պարզվում է ՀՀ կառավարության այս տարվա հուլիսի 4-ի 777-Ն որոշմամբ 416 մլն 769 հազար դրամ է հատկացվել «Ա/ճ Մ-2 Երեւան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի Իսլամական Հանրապետության սահման կմ 177+000-կմ 217+000 առանձին հատվածների հիմնանորոգման» աշխատանքների համար: Կառավարությունը որոշել է, որ հիշյալ ճանապարհահատվածի վերանորոգման աշխատանքները պետք է իրականացվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքով՝ բանակցային ընթացակարգով, առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով: Օգոստոսի 14-ին տրանսպորտի եւ կապի նախարարությունը պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր է կնքել «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի հետ՝ 409 մլն 221 հազար դրամ արժեքով: Աշխատանքները պետք է ավարտվեն այս տարվա հոկտեմբերի 12-ին:

«Հետք» էլեկտրոնային կայքը նշում է, որ «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն 100 տոկոսով պատկանում է Աժ փոխնախագահ, ՀՀԿ անդամ Հերմինե Նաղդալյանին: «Մրցույթներ չհայտարարելով՝ պետության կարիքների համար պետական գնման պայմանագրերի կնքման նպատակը մեկն է՝ թույլ չտալ «անցանկալի» ընկերությունների մուտքը շուկա, ինչն էլ ենթադրում է խոշոր կապիտալի բեւեռացում իշխանությունների մերձավոր շրջապատի ձեռքում», գրել է կայքը՝ ավելացնելով, որ Նաղդալյանին նեղ շրջապատում ասում են «բիզնես լեդի»: Նա խորհրդարանի ամենահարուստ կին պատգամավորն է: Թեեւ Հերմինե Նաղդալյանը հաճախ է հայտնվել սկանդալային պատմությունների մեջ, եւ դրա մասին մամուլը բարձրաձայնել է, սակայն իշխանությունները, այս դեպքում՝ կառավարությունը, չի խուսափում պետական բյուջեի հաշվին մի քանի զրոներով Աժ փոխնախագահի հարստությունն ավելացնելուց: Հերմինե Նաղդալյանը բաժնետոմսեր ու այլ ներդրումներ ունի նաեւ «Սիսիան Շիկ», «Բեգմիք», «Նազենիկ» ՍՊԸ-ներում: Իսկ 2012թ. 13 մլն դրամով օտարել է իրեն պատկանող «Ալնարս» ՍՊԸ-ն: Հերմինե Նաղդալյանն ունի 5 միավոր հողամաս, 2 բնակարան, 2 շինություն եւ մեկ շենք՝ իրենց հողամասերով:

Հերմինե Նաղդալյանի ամուսինը՝Դավիթ Բեգլարյանը, ըստ գույքի ու եկամուտների հայտարարագրի, 2011թ. հանձնված կամ վերադարձված փոխառություններից ստացել է 288 մլն դրամ եւ 850 հազար դոլար: Դ.Բեգլարյանի դրամական միջոցները 2011թ. վերջին կազմել են 15 մլն, իսկ աշխատավարձից ստացած եկամուտները՝ 3 մլն 661 հազար դրամ: 2012թ. տարեվերջին Դավիթ Բեգլարյանը հայտարարագրել է 6 մլն դրամ, որպես ունեցած դրամական միջոց եւ եկամուտ՝ 1 մլն 471 հազար դրամ, որը գոյացել է աշխատավարձից:

ԳՈՀԱՐ ՎԵՋԻՐՅԱՆ
«Չորրորդ իշխանություն»
31 օգոստոսի 2013թ.

ԿՈՐԵԼ Է «Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 2012-13 ուստարվա շրջանավարտ Ռուզաննա Հրանտիկի Գրիգորյանի ԱԱ N060298 ատեստատը: Համարել անվավեր:

ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ՝ ընտանեկան բժիշկ-սրտամարտոլոգի թափուր պաշտոնի համար

ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով, բաց մրցույթի մասնակից կարող է լինել ցանկացած անձ, ով կբավարարի ստորեւ նշված պայմաններին

Բարձրագույն բժշկական եւ հետբուհական կրթության առկայություն՝ համապատասխան մասնագիտությամբ:

Վերջին հինգ տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական կատարելագործման առկայություն, եթե մասնագիտացումն ավարտելուց անցել է առավել քան 5 տարի:

Բժշկական էթիկայի կանոնների իմացություն:

Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող ՀՀ քաղաքացի, ինչպես նաեւ օտարերկրյա քաղաքացի, ով ունի կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն, եւ ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Թափուր տեղի հավակնորդների կողմից ներկայացվում է՝

- դիմում (լրացվում է տեղում)
- մեկ լուսանկար 3x4 չափի
- քաղվածք աշխատանքային գրքույկից
- ինքնակենսագրություն
- անձնագրի, բարձրագույն եւ հետբուհական կրթությունը հաստատող դիպլոմի եւ վերապատրաստման վկայականի պատճեններն ու բնօրինակները
- արական սեռի անձինք՝ նաեւ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը
- նախորդ աշխատավայրից բնութագիր (եթե այդպիսին առկա է)
- օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ եւ աշխատանքի թույլտվություն:

Անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելուց հետո մրցույթի մասնակիցը կծանոթանա այն իրավական ակտերի ցանկին, որոնցից բաղկացած է լինելու հարցատոմսը: Փաստաթղթերն ընդունվում են «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում, ամեն օր ժամը 10.00-16.00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից (ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Գ. Տաթեւացի 31, հեռ. 0284 2-21-52): Մրցույթը տեղի կունենա «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում, 01.10.2013թ. ժամը 12.00-ին:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի աշխատանքային խմբին:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերը հետ չեն վերադարձվում:

Կապանում բաց եղանակով հանք չի շահագործվելու

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Օգոստոսի 30-ին «Օրհուս» բնապահպանական տեղեկատվական կենտրոնում տեղի էր ունեցել հանրային քննարկում, որին մասնակցում էին Կապանի ավագանու անդամներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նրանք իրենց դիրքորոշումն էին հայտնել «Դանդի փրիշս մեթալս-Կապան» ընկերության կողմից Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրը բաց եղանակով շահագործելու վերաբերյալ: Ավելի ստույգ՝ շատերը դեմ էին այդ հանքավայրը բաց եղանակով շահագործելուն եւ այդ մասին հստակորեն արտահայտվեցին:

Սեպտեմբերի 3-ին արդեն «Դանդի փրիշս մեթալս-Կապան» տեղեկատվական կենտրոնում ընկերության գլխավոր տնօրեն Հրաչ Զաբրայանի մամուլի ասուլիսը տեղի ունեցավ, որը լույս սփռեց խնդրո առարկայի վրա: Նրա խոսքերով տարածայնություններին վերջ տալու համար, թեպետ վերջնականապես չի հանդիպել Կանադայում գտնվող սեփականատիրոջ հետ, որոշել է հայտարարություն անել, որ Կապանում բաց եղանակով հանք չի շահագործվելու: **«Նկատի ունենալով վերջին վեց տարվա որոնողական-հետախուզական աշխատանքի արդյունքները՝ ուրախ եմ հայտարարելու, որ «Դանդի փրիշս մեթալս» ընկերությունը որոշել է, որ Շահումյանի տարածքում բաց հանք չպիտի լինի, այլ հանքաքարի արդյունահանումը պիտի իրականացվի ստորգետնյա եղանակով: Առաջիկա յոթ ամսում մենք պիտի ձեռնարկենք լուրջ աշխատանքներ վերջնականապես ճշտելու ստորգետնյա պաշարների իրական չափը, որակը, նաեւ՝ թե այդ հանքը ստորգետնյա ինչ պայմաններով պիտի շարունակենք շահագործել՝ ներկայիս չափերո՞վ, այսինքն՝ տարեկան 600 հազար տոննա հանքաքար, ամսական պլանը՝ 50 հազար տոննա, թե՞ կնախածեռնենք արդյունահանման ծավալների ընդլայնում, ասենք՝ մեկ տարվա կտրվածքով ծավալներն ավելացնենք տասը տոկոսով, երկու տարի հետո՝ 20 տոկոսով, վերջին հինգ տարում հասցնենք ավելի լուրջ ցուցանիշի, այն է՝ տարեկան մեկ միլիոն տոննա հանքաքարի արդյունահանում: Այս ամենը լուրջ մասնագետներով յոթ-ութ ամսում պիտի ճշտենք, եւ այդ ուսումնասիրության արդյունքը հանրության սեփականությունը պիտի դառնա»,** – մանրամասնեց ընկերության գլխավոր տնօրենը եւ հավելեց, որ մի քանի օր հետո Կանադա կմեկնի, նպատակներից մեկն այն է, որ սեփականատիրոջ հետ արծարծեն, թե 2014-ին «Դանդի փրիշս մեթալս-Կապան» ընկերությունում որքան ներդրում պիտի անեն (նախնական տվյալներով մոտ 25 մլն դոլար): Անդրադառնալով ընկերության նախաձեռնած հետախուզական-որոնողական աշխատանքներին՝ Հրաչ Զաբրայանը նշեց, որ դրանք իրականացվում են 2006-ից, ընկերության հանքահումքային պաշարները վերջնականապես ճշտելու նպատակով: Ըստ բանախոսի՝ դրանց մասին խորհրդային ժամանակներից մնացած տեղեկատվությունն այլեւս արժանահավատություն չի ներշնչում եւ բավականին տարակարծություններ էր հարուցել: Մանավանդ 2007-2008թթ. հետախուզական-որոնողական բավականին աշխատանքներ են կատարվել եւ՛ ստորգետնյա հանքում, եւ՛ Շահումյանի տարածքում: Վերջինիս մակերեսային հետախուզական աշխատանքները համարյա դադարեցված են, միայն այստեղ-այնտեղ փոքրիկ հորատումներ են իրականացվում: Վեց տարի շարունակ կատարվող որոնողական-հետախուզական աշխատանքների արդյունքը միջազգային չափանիշներով պատրաստված 215 էջանոց փաստաթուղթն է, որը տեղեկություններ է հաղորդում պաշարների մասին (հաստատված եւ ենթադրյալ): Փաստաթուղթը ներկայացված է նաեւ Կանադայի կառավարությանը:

Ասուլիսին խոսք եղավ ընկերության սոցիալական ծրագրերի մասին, ինչի առիթով բանախոսը հայտնեց, որ կշարունակեն աշխատել թափանցիկ աշխատաոճով եւ նույնիսկ ներկաներից (հիմնականում ՀԿ-ների ներկայացուցիչներ եւ լրագրողներ) խնդրեց օգնություն՝ ապահովելու ընկերության բնականոն աշխատանքը, պահպանելու 1200 աշխատատեղը: **«Վերջին տասը օրում զրույցներ եմ ունեցել սեփականատիրոջ հետ, ով խոստացել է ընկերությանը շահույթով աշխատելու դեպքում դրա տասը տոկոսը տրամադրել համայնքին»,** – ասաց եւ եզրակացրեց, որ դրանով «Դանդի փրիշս մեթալս-Կապանը» կդառնա աշխարհում ամենաբարձր ներդրում անող ձեռնարկությունը: Հրաչ Զաբրայանը նաեւ համոզմունք հայտնեց, որ 2014-ն առաջին շահութաբեր տարեշրջանը կլինի կապանյան ընկերության համար:

Ասուլիսի ժամանակ արծարծված հարցերի վերաբերյալ իրենց նկատառումները հայտնեցին եւ օրվա բանախոսին հարցեր ուղղեցին «Օրհուս» բնապահպանական կենտրոնի ղեկավար Աշոտ Ավագյանը, «Խուստուփ» բնապահպանական հասարակական կազմակերպության նախագահ Վլադիկ Մարտիրոսյանը, լեռնային ճարտարագետ, տեխնիկական գիտությունների թեկնածու Սամվել Գասպարյանը, Սուսաննա Մարտիրոսյանը, ուրիշներ: **«Ընկերության սեփականատերը չի՞ մտածում կենտրոնական հանքը, որ կոնսերվացվել է, կրկին շահագործելու մասին, քանզի այդտեղ դեռեւս զգալի պաշարներ կան»** հարցին Հրաչ Զաբրայանը պատասխանեց, որ ընկերության ղեկավարությունը նման գաղափար չի արծարծել, որովհետեւ կենտրոնական հանքն այլեւս «Դանդիին» չի պատկանում: **«Եթե ինչ-որ ծրագիր էլ ունենանք, պիտի կառավարությանը դիմենք, նախարարությանը եւ այլն, եւ այլն: Մի խոսքով ներկայումս նման մտադրություն չկա»:**

Որքանով տեղեկացան ներկաները, արտադրության կազմակերպման գործում եւս խնդիրներ կան: **«Հին, խորհրդային մեթոդով կազմակերպվող աշխատանքները մեզ մոտ չեն ստացվում, եւ դրանք փոփոխության կարոտ են: Այդ բոլորը իմ՝ գլխավոր տնօրենի եւ տնօրենների խնդիրն է, որ համատեղ ուժերով պիտի լուծենք»,** – եզրակացրեց բանախոսը: Իսկ խնդիրների խնդիրն այն է, որ ընկերությունը ներկայումս շահույթով չի աշխատում: Հայտնվեց, որ այսօրվանից (սեպտեմբերի 3, խմբ.) հարստացուցիչ ֆաբրիկան դադարեցրել է աշխատանքները, ինչը կտեւի մինչեւ հոկտեմբերի 1-ը: Ի՞նչն է պատճառը: **«Անկեղծ ասեմ՝ հանքաքար չկա մշակելու, որովհետեւ նախապատրաստական աշխատանքները, պայթեցումները ճիշտ չեն կազմակերպվել, հանքաքար չի արդյունահանվել: Մեծ մեղք գործած կլինեմ, որ աշխատավորին մեղադրեմ, այլ պիտի մեղադրեմ ղեկավարությանը, որ կազմակերպչական աշխատանքները ճիշտ չի կազմակերպել: Բայց պիտի հաղթահարենք դժվարությունները, եւ ձեռնարկությունը պիտի դարձնենք շահութաբեր»,** – եւս մի անգամ լավատեսական նոտայով ավարտեց իր խոսքը Հրաչ Զաբրայանը: Այս տարվա մարտի 15-ին ընկերության տեղեկատվական կենտրոնում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ Հրաչ Զաբրայանն անդրադարձել է այն խնդրին, թե ընկերությունում չեն կարողանում կասեցնել գողությունները, եւ մինչեւ դրանք նվազագույնի չհասցվեն, ներդրումներ չեն արվի: «Այունյաց երկիրը» հետաքրքրվեց, թե արդյո՞ք հնարավոր եղավ այդ արատավոր երեւույթի դեմն առնել: Պատասխանվեց, որ բավականին տեղաշարժ կա այդ խնդրում, բայց մարդիկ շարունակում են ձեռնարկությունից ինչ-որ բան թռցնել: Կոնկրետ փաստ բերվեց. անցյալ շաբաթվա ընթացքում ընկերությունում բացահայտվել է մի գողություն, որ վերջին չորս-վեց ամսում կարեւորվում էր: 40 հազար դոլարի վնաս են հասցրել ընկերությանը, եւ ինչպես նշվեց, գործը **հանձնելու են ոստիկանությանը: «Եթե մարդիկ գան եւ ինձ հայտնեն, որ լուրջ նեղության մեջ են, նրանց անպատճառ կօգնեմ»,** – համոզմունք հայտնեց բանախոսը, նաեւ եզրակացրեց, որ այդ գողացողների հետեւում մարդիկ կան կանգնած, իրավախախտներն ընդամենը գործիք են:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Այունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գլխավոր խմբագիր՝
ê²Ø ì ºÈ ²È º ø ê ² ÜÚ² Ü

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 06 28 02:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 06.09.2013թ.: